

19029

One Gr Group

891.99

f-14

P- 1914







Յ91.99

Բ - 14

ԵՆԻՈՆ ԲԱՆԱԾԱՐ

# ԾԱՆՐ ԵՐԱԶ

ԳԻՒՄ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

200

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԵԱ» Մուգեյան փող. № 8  
1914.



4434

891.99

- 2-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Միջոցառման արդյունքների համալրում

Հրապարակում

29.8.913.

# ԾԱՆՐԵՐԱԶ

ԳԻՆԵ 4 ԴՈՒՇՈՂՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ամսագրային հրատարակում

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՑ

13 ՆՈՅԵՄ. 1918 թ., ԹԻՖԼԻՍ.

1001  
4501



12003

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԳՈՒՆ» Մուգիկյան փող. № 8  
1913



Настоящая пьеса подъ заглавіемъ „Тяжелый сонъ“ соч.  
Л. Калангара разрѣшена Намѣстникомъ ЕГО ИМПЕРАТОР-  
СКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ, для представленія на сце-  
нахъ края.

(Отзывъ Канцеляріи за № 22209—912 г.)

10 Октября 1912 г. Тифлисъ.

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ե Ր:

Ա ք ր ա մ:

Լ ի ւ ս ի—նրա կինը:

Ծ ի ք ա յ է լ:

Ռ ու բ է ն:

Հ ե ղ ի ն է—Լիւսիի ազգականուհին:

Ա ն ն ա—Լիւսիի մօրաքոյրը:

Հ ի ւ ր ե ր—(2-րդ գործողութեան մէջ)՝ հաստ պա-  
րոն, նիհար պարոն, երիտասարդ պարոն,  
աստիճանաւոր, ուսանող, օրիորդ, առա-  
ջին հիւր, երկրորդ հիւր, պարող զոյգ:

Ա ղ ա խ ի ն:

Անցըր պատահում է մեր օրերում:

|       |                                             |
|-------|---------------------------------------------|
| 1 և 2 | գործողութիւնների միջև անցնում է մի քանի օր: |
| 2 և 3 | » » մօտ 2 շաբաթ:                            |
| 3 և 4 | » » մէկ ու կէս օր:                          |



Պէտքը ներկայացւել է առաջին անգամ 1912 թ.  
հոկտ. 22-ին Թիֆլիսի Արտիստական Ժատրոնում:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ



Բեմը ներկայացնում է երկու ոչ մեծ սենեակ Աբրամի տանը. ձախ կողմի սենեակը՝ կաբինետ, աջը՝ հիւրասենեակ։ Երկու սենեակներն էլ դուրս են գալիս դռներով դէպի նախասենեակը (կօրրիդօր) հետեւալ ձևով. կաբինետը յետևի պատի դռով, իսկ հիւրասենեակը ձախակողմեան պատի յետևի մասի դռով։ Հետևապէս՝ հիւրասենեակը բաժնի խոր է քան կաբինետը։ Բացի դրանից երկու սենեակներն էլ իրար հետ միանում են լայն դռով։

Հիւրասենեակում։ Յետևի պատում—երկու մեծ պատուհաններ։ Աջ պատի մէջ՝ երկու դուռ, որոնք տանում են դէպի մնացեալ սենեակները։ Կահլարասիքը—սովորական, առանց աչքի ընկնող շուքի, բայց գեղեցիկ—դասաւորւած է սենեակում մեծ ճաշակով։ Աջ պատի մօտ, երկրորդ շարքում, դրած է դաշնամուրը։ Վառարանը՝ ձախ պատում։

Կաբինետում։ Ձախ պատի մէջ՝ պատուհան։ Պատուհանի առաջ դրած է գրասեղանը։ Աջ պատի մօտ՝ թախտ և մի քանի բազկաթոռներ։ Բացի դրանից կան երկու պահարան գրքերով։

Գարուն։ Պատուհաններից ներս է թափանցում գարնանային պայծառ լոյսը, թէև օրը վերջանալու վրա է։ Գործողութեան վերջում երեկոյ է։

Մ ա ն օ թ.—Աշակողմը և ձախակողմը—միշտ հանդիսականներից։

## ԱՌԱՋԻՆ ՏԵՄԻՒ

Կաբինետում, գրասեղանի առաջ նստած է Ա. Բ. Բ. Բ. և քրքրում է թղթերը։ Բազկաթոռներից մէկի վրա նստած է Լ. Ի. Լ. Ի.։ Նա ասեղնադործում է ինչ որ երկար կտորի վրա։

Ա. Բ. Բ. Բ.—Աչքի կանցնեմ այս բոլորը և այժար է դարձեալ այնտեղ շտապեմ։ Այս երկու օրս մի բոպէ էլ հանգստու թիւն չունեմ։ Նախ և առաջ—նամակները (աչքի է անցնում ստացւած թղթակցութիւնները)։

Լ. Ի. Լ. Ի.—Իսկ երեկոյեան հօ աղմուտ ես։

Ա. Բ. Բ. Բ.—Այո։ Ի՜նչ միայն ժամ կամ ժամ ու կէս է պէտք... Ժամը բւթիւն աղաւ կը լինեմ։ Թաւրօնի տոմարէները վերցրել ես։

Լ. Ի. Լ. Ի.—Ի հարկէ։

Ա. Բ. Բ. Բ.—Շատ բարի։ Ուրեմն ևս ուղղակի էր գամ թատրօն (կարդում է լուրեայն նամակները)։

Պատուգ

Ա. Բ. Բ. Բ.—Լիւսի։

Լ. Ի. Լ. Ի.—Ի՞նչ կայ։

Ա. Բ. Բ. Բ.—Երեւակալիր... Գիտե՞ս ումիցն է այս նամակը։

Լ. Ի. Լ. Ի.—Ի՞նչպէս կարող եմ իմանալ։

Ա. Բ. Բ. Բ.—Դէ գուշակիր... Միքայէլիցն է։ Նա գալիս է այստեղ։

Լ. Ի. Լ. Ի.—Միքայէլը։

Ա. Բ. Բ. Բ.—Մօտ օրերս այստեղ կը լինի արդէն։ Ո՛րքան լու է այդ, չէ՞, Լիւսի։

Լ. Ի. Լ. Ի.—(ուրախացած) Այո, շատ ուրախալի կը լինի նորից տեսնել նրա հետ։

Ա. Բ. Բ. Բ.—Աւտուած իմ։ Ո՛րքան շատ բան կը պատմենք մենք իրար։ Վաղուց է որ իրար չենք տեսել։

Լ. Ի. Լ. Ի.—Ես կարծում եմ... Դուք այնպիսի ընկերներ էք... Իսկ երկար ժամանակով է նա գալիս։

Ա. Բ. Բ. Բ.—Դրում է, որ երկար ժամանակով։ Մօտ օրերս այստեղ կը լինի։ Ա՜հ, որքան լաւ յիշողութիւններ կան... մեր



Լ ի ւ ս ի.—(Թողնելով ասեղնագործը) Այո, լաւ տղայ է Մի-  
քայէլը: Ես էլ եմ նրան սիրում: Յիշում ես, մենք անց-  
նում էինք դետը, և յանկարծ փոքր իկ կամուրջը չը դիմացաւ... և  
մենք ընկանք ջուրը: Երեքս էլ միասին: Դա մեր հարսանիքից  
ցետոյ էր, առաջին օրերը... դեռ այն ժամանակ.. դեռ այն ժա-  
մանակ... (նոյնպէս մտածմունքի մէջ է ընկնում):

Ա Ր Ր Վ Մ.—Ի՞նչ բանի վրա ես մտածում, Լիւսի: Ահա  
սովոր է հայեացքը:

Աբրահամ. — Ես հարցրեալ եմ, ի՞նչ բանի մասին ես ծոում:

Ա ռ Ր ա մ.—Այո, ես էլ էի մտածում իմ նախկին տարի-  
նեքի մասին:

Լ ի լ ա ի, — Բալց ինչո՞ւ և այն և ոչ:

Լ ի ւ ս ի.—(ժպտալով) Ի՞նչ է, շնորհակալութիւնս յարտ-  
քեզ այդ խօսքերիդ համար:

Լ Ի ւ ս Ի.—Ինչպէս երևում է, զուգեռն ևս չես մոռացել  
ձօնապիմէնտներ ասելը: Այդ լաւ է:

Ա. Բ. Մ. Բ. — (վեր է կենում, մօտենում նրան) Դու կարծում ես  
 Հիմալիանոսներ եմ ասում: Ինչո՞ւ պէտք է ասեմ, և, վերջապէս,  
 Հիմալիանոսներ ասելու շնորք էլ չունեմ (նստում է կողք կողքին):

Ա ը ը ա մ.—Մի՞թէ: Բայց այն, ինչ որ ես ասում էի այն ժամանակ, ես այժմ էլ պատրաստ եմ հրկնեւում: Իմ անգիմս, վեց տարի է անցել արդէն այն ժամանակահանից, բայց ռըքան տարօնակ է...

Ա Ր Ր ա մ.—Ամեն օր ես սկսում եմ քեզ սիրելնոր ոյժով: Իւրաքանչիւր առաւօտ ինձ այնպէս է թւում, որ ես առաջին անգամս եմ քեզ տեսնում...

Num. 93

Լ ի լ ս ի. — Իարձեալ նոյն բանի մասին: Մտաբերում եմ տնակը ամարանոցում... ամարային ամիսները, որ անց էի կացրել այնտեղ. մտաբերում եմ անտառը...

Լ ի ւ ս ի.—Գիտե՞ս ինչ: Եթէ կարելի է... ես կը կամենա  
յի ամառը այնտեղ գնալ: Թէկուզ ոչ երկար ժամանակով...

Լ Ի Լ Ս Ի.—Այո, չեմ թաքցնի: Այնքան ուրախալի կը լինի մտաբերել հին տարիները մեզ մօտ, իմ ծննդավայրում:

Quinqu

Լ Ի Լ Խ.—(Ճիծաղելով) Դա քեզ անհանգստութիւն է պատճառով:

Լ Ի ւ ս Ի. — (վայրկենական ինքնամոռացութեան մէջ) Երբեմն ինձ  
էլ է այդ բանը անհանդուարացնում:



Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ի՞նչ մտքով: Չը հասկացայ ես:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — (սթափելով) Ի՞նչ ասացի որ. կարծեմ ինչ որ մի անմտութիւն: Ես բոլորովին ուրիշ բանի մասին էի մտածում:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — (հայեցքը յստեղծելով նրան) Այո, Լիւսի, դու այժմ յաճախ մտածում ես ուրիշ բաների մասին:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Հիմա էլ ես չը հասկացայ քեզ:

(Մի քանի վայրկեան նայում են իրար: Ապա երկուսն էլ ցած են դնում աչքերը):

Ա. Բ. Բ. Կ. Կ. — (կարծես ինչ որ մտքեր վանելով իրանից) Ինձ դարձեալ հայտնում են «Լոյսի» մէջ: Ես բոլորովին մոռացայ քեզ տալ կարդալու: Նրանք բոլոր ոյժով աշխատում են հերքել իմ ասածները, բայց և այնպէս ոչինչ դուրս չէ գալիս: Չաւէշտական է, մի համարում երկու յօդած իմ դէմ: Դրանցից մէկը դարձեալ ստորագրած է Ursus (Ուրսուս):

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Դարձեալ Ursus:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Այո: Հետաքրքրական է իմանալ, ով է նա իսկապէս: Ես մինչև այժմ չը կարողացայ իմանալ այդ բանը: Ինձ համար բոլորովին նոր մարդ է: Ընդամենը երկու շաբաթ է որ այդ անունը սկսել է երևալ լրագիրների մէջ, մինչդեռ այդքան կարճ ժամանակում նա կարողացել է բաւականաչափ յօդածներ գրել իմ դէմ:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Իսկ ի՞նչ է նշանակում Ursus:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Դա լատինական բառ է, նշանակում է՝ արջ:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Ա՞րջ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Այո: Բայց ես կը պատժեմ նրան այդ յօդածի համար: Նա վերգովեցուցիչ բաներ է ասում: Նա պահանջում է քանդել գեղարւեստի տաճարները և բեմեր կառուցանել հրապարակների վրա: Դէ, ի հարկ է, նրանց հարկաւոր չեն գեղարւեստի տաճարներ, հարկաւոր են գլխաւորապէս, փողոցային ամբիոններ, ուր նրանք կարողանային քարոզել օրւայ «ստեղծագործական գաղափարները»: Նրանց համար գեղարւեստը գոյութիւն չունի իբրև ինքնանպատակ և որոշ չափով մի արտօլիտ: Գեղարւեստ: Լիւսի, չէ՞ որ այդ արդէն կեանքի և իմաստութեան ամբողջացումն է, այն բոլորը, ինչ որ կարող էր ստեղծել մարդկային հանճարը: Գեղարւեստը աւետեաց երկիրն է, իսկ նրանց համար դա թռուցիկ թերթերի առանձին տեսակն է: Գիտես, Լիւսի, դա ինձ այնքան է վերգովեցնում, որ...

Լ. Ի. Լ. Կ. Կ. — (չը լսելով նրան) Արջ... Ursus — արջ...

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ի՞նչ ես ասում դու, Լիւսի: Ի՞նչ արջ: Ա՛հ, այո... էհ, ի՞նչ կայ որ: Ինչի՞ վրա ես զարմանում:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Տարօրինակ է...

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ի՞նչը:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Չէ, ոչինչ, ինձ տարօրինակ թւաց, որ մարդ կարող է ընտրել մի այդպիսի ծածկանուն:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Այո, իրաւ որ, մի փոքր տարօրինակ է:

Պատուա:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — (յանկարծ) Աբրամ, ուզում ես... ես քեզ պատմեմ մի փոքրիկ պատմութիւն իմ կեանքից:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Խնդրեմ:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Իսկ դու չէ՞ս ուշանայ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Դեռ ես ժամանակ կայ: Հապա:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Դու միայն մի բարկանար: Ես ուզում եմ պատմել թէ ինչպէս սիրահարւած էի մի պարոնի վրա, երբ դեռ ես աղջիկ էի: Պատմեմ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Խնդրեմ: Ինչո՞ւ պէտք է բարկանամ:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Դէ ի հարկէ: Բայց գիտես... իւրաքանչիւր անգամ, երբ ես մտաբերում էի այդ, աշխատում էի մի կերպ հեռու վանել ինձանից այդ յիշողութիւնները: Ես, կարծես, վախենում էի նրանցից: Այդ պատճառով էլ քեզ չէի պատմում:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Տարօրինակ է: Սակայն ինչո՞վ վերջացաւ ձեր սէրը:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Սէ՛ր: — Այդ չափազանց ուժեղ խօսք է: Ես այն ժամանակ համարեա փոքրիկ աղջիկ էի: Նա նոյնպէս մեծ չէր, ոչ աւելի քան 20 տարեկան: Մենք ամբողջ երեկոնները զբոսնում էինք պարտէզում միասին, ախ քաշում: Մի խօսքով, բոլորովին այնպէս, ինչպէս բոմաններում: Նա խոստանում էր ամուսնանալ ինձ հետ, երբ կեանք մտնի, մարդամէջ դուրս գայ... երդում էր, որ երբէք չի մոռանայ ինձ, ես էլ պատասխանում էի նրան փոխադարձաբար: Վերջապէս, գնաց նա: Դրանով էլ վերջացաւ ամեն ինչ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Եւ դուք այլ ևս չը տեսնեք իրար:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Ոչ: Սկզբներում նա ինձ նամակ գրում էր, բայց յետոյ, թէ ի՞նչ եղաւ նա, ո՛րը գնաց, ես չը գիտեմ: Ես յիշում եմ, թէ ինչպէս, հրաժեշտ տալիս, նա ինձ համբուրեց առաջին ու վերջին անգամ:



Ա. Բ. Բ. Կ. Կ. — (Ժպտալով) Առաջին անգամ:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — (նոյնպէս) Այո, երեւակայիր: Ահա և բոլորը: Ամեն բան ասացի քեզ, և այժմ բոլորովին հանգիստ եմ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Բայց միթէ այդ բանը քեզ ճշգրտւում էր:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Այո, մի քիչ...

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ինչ ծիծաղելին էս, Լիւսի: Ինչո՞ւ չէիր վաղ պատմում, մի քանի տարի առաջ... Կոնէ որպէս զի չը ճշգրտէիր դրանից:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — Չը գիտեմ ճիշտն ասած... Ինչոր մի բան արգելում էր ինձ... ինձ թւում էր...

(Բեմի յետում զանգ)

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Մարդ է եկել... երեւի ինձ մօտ: (նայում է ժամացույցին) Ասենք, մի քանի ազատ ընկերներ ունեւմ դեռ:

Լ. Ի. Լ. Կ. Կ. — (վեր կենալով) Այստեղ ամեն ինչ թափթփւած է... Ընդունիր այն սենեակում: Իսկ ես դուրս կը գամ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Լաւ:

(Երկուսն էլ անցնում են հիւրասենեակ: Լիւսի ն հեռանում է դէպի աջ):

#### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻՆ

Ա. Գ. Կ. Կ. Կ. — (ներս է մտնում) Ձեզ հարցնում է մի ինչ որ պարոն: Ես նրան առաջին անգամն է որ տեսնում եմ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Խնդրիր ներս գայ: (ներս է մտնում Մ. Ի. Բ. Կ. Կ. Աղաթինը հեռանում է):

Ա. Բ. Բ. Կ. Կ. — (զլծով բարե տալով, առաջարկում է աթոռ) Խընդրեմ... Ինչո՞վ կարող եմ ծառայել...

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Ինչով կարող եմ ծառայել... Դու նոյն իսկ չես էլ ճանաչում ինձ, Աբրամ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — (բացահայտելով) Միքայէլ:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այ, այսպէս: (մտերմաբար զրկախառնում են)

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Այդ ի՞նչպէս պատահեց, որ դու այստեղ ես:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Սպասիր, չէ՞ որ ես քեզ գրել եմ այդ մասին:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Այո, բայց դու նամակումդ գրում ես, որ ճանապարհակալ եմ մի քանի օրից յետոյ:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Դէ, հա: Ես էլ դուրս եկայ երեք օրից յետոյ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ուրեմն նամակդ ուշացել է: Նստիր դէ, նրատիր: Պատմիր: Ստորագրուրդից ես գալիս, հա՞...

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այո, Ստորագրուրդից, և երկար ժամանակով: Այնպէս կարօտել եմ հայրենիքս. վերջին օրը ես չէի հեռանում վագօնի լուսամտակից, ինձ թւում էր, որ ինձ ողջունում է հողի ամեն մի կտորը...

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ես նայում եմ քեզ վրա և չը գիտեմ ինչ ասել...

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այո, ես էլ մի ինչ որ տարօրինակ բան եմ զգում: (նայում է Աբրամին) Դու գարձեալ նոյնն ես, միայն դէմքով մի քիչ աւելի մեծ ես երևում:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ասենք, դու էլ չես փոխել, թէ ես չը ճանաչեցի էլ քեզ: Դու, ասում ես, երկար ժամանակով ես եկել:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այո, մի քանի ամսով: Իսկ յետոյ էլի կը գնամ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Բայց գիտես, դու այնքան քիչ ես նամակ գրում, որ ես ոչ մի հասկացողութիւն չունեմ, թէ դու ինչ էիր անում այնտեղ եղած ժամանակ: Ինչ որ իմացել եմ՝ ուրիշներէ:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Բեզ չէի գրել միթէ, որ ես մասնակցում էի «Asiatische Gesellschaft»-ի յանձնարարութեամբ Արևելք գնացող էքսպէդիցիային:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ոչ, բայց այդ բանը իմացայ լրագիրներից:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Միթէ չեմ գրել: Ամբողջ տասն ամիս տեւեց մեր ճանապարհորդութիւնը:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Լաւ, իսկ անժամ: Ի՞նչ ես մտադիր անել այստեղ:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Դործեր շատ կան: Ճանապարհորդութեանս ժամանակ ես ահագին նիւթեր եմ ժողովել: Այստեղ պէտք է մշակեմ այն: Իսկ որ գլխաւորն է՝ եկել իմ հայրենիքս: Եկել եմ տեսնելու թանգազին Աբրամին ու Լիւսիին... նա ի՞նչպէս է տանն է:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Տէր իմ Աստած: Ես այնքան ուրախացայ, որ բոլորովին մոռացել եմ իմաց տալ նրան: (վեր է կենում տեղից) Ես այս բոլորին... (շտապով հեռանում է դէպի աջ, առաջին դռնով. Միքայէլը նոյնպէս վեր է կենում, մօտենում է պատուհանին և նայում այնտեղ):

Ա. Բ. Բ. Կ. Կ. — (ներս է մտնում) Նա այս բոլորիս կը գայ, մի քիչ կարգի կը բերէ իրան... Երեւակայիր, ուրախութիւնից նա նոյն իսկ ճչաց:



Մի քաջ էլ.—Միթէ... Ես ահա նայում եմ այս ծառերին, այս երկնքին, և նրանք ինձ այնքան մօտ են թւում, կարծես թէ իմ հարազատ քոյրերը լինեն։ Ուղղակի վերին երկնքում եմ ինձ զգում։ Աբրամ, իմ թանգագին։ (Դրկախառնած նրանք քայլում են սենեակում)։ Է, իսկ դու ինչ ես անում։

Աբրամ.—Նոյնը, ինչ որ առաջ։

Մի քաջ էլ.—Լրագրիչների միջոցով ես հետևում էի քո գործունեությանը։ Դու քաջ տղայ ես, լաւ ու ազնւաբար ես աշխատում։ Ինչպէս ասում են, քո մի քանի յօդաւճանքներ և աշխատութիւնները ահագին փոթորիկ են բարձրացրել... Թեր և դէմ։

Աբրամ.—Այդ ճշմարիտ է։ Շնորհիւ «Կեանք» թերթի խմբագրութեան սիրալիր վերաբերմունքի, ինձ երբեմն յաջողում է հարւածել բոլոր այն կիսակիրթ թէօրեթիկներին, որոնք անաւստ են իրանց առաջամարտիկներ, ազատ մտածողներ, մի խօսքով ինչ որ կամենաս... Բայց եթէ իմանայիր դու ինչ տեսակի մարդիկ են դրանք... իսկական պարագլուխներ... Դրանք մեր հասարակութեան, մեր դժբաղդ բուրժուական հասարակութեան փթած և փթեցնող տարրերն են։ Իմ վերջին յօդաւճանքը բաւականաչափ ցնցեցին նրանց, բայց այդ, ի հարկէ, չազդեց նրանց վրա։ Այնուամենայնիւ, նրանք իրանց ամբողջ փառախով գրոհ տւին ինձ վրա՝ «Լոյս» թերթի ղեկավարութեամբ։ Ոչ մի միջոցի առաջ չեն քաշում ինձանից ազատելու համար։

Մի քաջ էլ.—Ահա թէ ինչ։

Աբրամ.—Այո։ Դէհ, այժմ մենք եռանդով միասին կաշխատենք։ Այստեղ կան մարդեր, աղնիւ մի քանի անձնաւորութիւններ։ Ես կը ծանօթացնեմ քեզ նրանց հետ։ Քանի այստեղ ես, ի հարկէ, դու էլ մեզ հետ կաշխատես, այնպէս չէ։

Մի քաջ էլ.—Աբրամ, իմ թանգագին ընկերս։ Դու էլի նոյնն ես մնացել։ Ես այնքան ուրախ եմ, այնքան շնորհակալ քեզնից, որ քո սրտում շարունակում են վառ մնալ մեր ուսանողական օրերի համոզմունքներն ու ցնորքները։ Իսկ շատերն են հաւատարիմ մնացել։ Շատ քչերը։ Այս բոլորիս ես այնքան վառ կերպով մտաբերեցի մեր ուսանողական կեանքը։ Դու այն ժամանակն էլ էիր այդպէս ոգևորած խօսում։

Աբրամ.—Այո... մեր ուսանողական կեանքը։ Ինչ որ մի հեռաւոր բանի շուրջ ինձ էլ հասաւ։ Մի մտածիր, չը տեսնեի քեզ այնքան տարի և... Ահ, յիշում ես Պետերբուրգում մեր վարած կեանքը, իսկ յետոյ Ստրասբուրգում, Բերլինում...

Մի քաջ էլ.—Այո, այո... Յիշում ես Նիկիտսկուն։ Ո՛րքան լաւ յիշողութիւններ են մնացել նրա մասին։

Աբրամ.—Հա, Նիկիտսկին։ Իսկ պրոֆեսսոր Շուլցը։ Նա մեռել է արդէն։

Մի քաջ էլ.—Այո, մի քանիսը մեռած են։

Աբրամ.—Այդ բոլորը յիշեցի, նորից յիշեցի... Գիտես, այնքան ծանր է ապրել այստեղ, մեր հասարակութեան մէջ, ուր բոլոր կենդանի ու լուսաւոր ձգտումները թաղւում են, ընկղմւում են քմահաճոյքների, բարքերի, սովորութիւնների և հազար ու մի նոյնանման բաների ներքոյ։

Մի քաջ էլ.—Այո, կարծում եմ, որ ծանր է։

Աբրամ.—Այնուամենայնիւ, եթէ մեզ յաջողւէր այս ճահճում ստեղծել բաղդաւորութեան մի հատիկ փոքրիկ անկիւն, զոնէ այդ էլ կը լինէր մի գեղեցիկ գործ։

Մի քաջ էլ.—Ի հարկէ։

#### ՆՐՐՈՐԴ ՏԵՍԻՍ

(Ներս է մտնում Լիւսի)։

Աբրամ.—Ահաւասիկ և Լիւսին։

Մի քաջ էլ.—Ա՛, բարև ձեզ, բարև...

Լիւսի.—Բարև էք եկել նորից մեզ մօտ։ (մեկնում է նրան երկու ձեռները։ Միջոցով համբուրում է այն)։

Լիւսի.—Այնքան ուրախ եմ, որ եկաք...

Մի քաջ էլ.—Ես ինքս էլ եմ ուրախ։ Ահա թէ ումը չէ կարելի ճանաչել—այդ ձեզ։ Դուք այնպէս էք լաւացել, մեծացել։

Լիւսի.—Իսկ դժբալ... Թողէք մի լաւ մտիկ տամ... այո, դուք էլ էք բաւականին մեծ երևում։ Դէհ, ինչ կը պատմէք։ (Նստում են)

Մի քաջ էլ.—Շատ բանի մասին կարող եմ պատմել... Բայց ես այնքան ուրախ եմ, որ նոյն իսկ չը գիտեմ թէ ինչ բանի մասին խօսեմ։

Աբրամ.—Այդպէս ուրեմն, մենք դարձեալ միասին ենք, միասին երեքս էլ։

Մի քաջ էլ.—Այո։ Վաղուց է, որ չենք տեսնել իրար։ Տարիները ինչպէս թռան անսկասկապ։



Լ ի ւ ս ի.—Նւ գուցէ շատ բաներում մենք այլ ևս չենք ճանաչի իրար: Երևի մեզանից ամեն մէկը իր տեսակի փոխել է: Գոնէ էս, խոստովանում եմ, ես շատ փոխւած եմ:

Մ ի ք ա յ է Լ.—Նւ ի հարկէ դէպի լաւը:

Լ ի ւ ս ի.—(Ժպտալով) Յոյս ունեմ, որ ես այժմ դուր կը դամ ձեզ առաջնանից աւելի:

Ա ր ւ ա մ.—Օ՜, Լիւսին այժմ ուրիշ էակ է դարձել: Ես ուխտեցի վեր բարձրացնել նրան այն միջավայրից, որ շրջապատել էր նրան մահկանայնից, և կարծում եմ հասայ իմ նպատակին: Ինձ յաջողեց վերջնականապէս պոկել նրան առաջնայ կեանքից: Նւ այժմ... կարելի է միթէ մեր հասարակութեան որ և է մի տիկնոջ համեմատել Լիւսի հետ: Ես բոլորովին չեմ ուզում ինքս ինձ դժգոյս, բայց դա այդպէս է, չէ՞. Լիւսի:

Լ ի ւ ս ի.—Այո, ի հարկէ: (մոռամոլոր) Այժմ այն չեմ, այժմ այն չեմ...

Մ ի ք ա յ է Լ.—Ես միշտ հաւատացած էի, որ այդպէս կը լինի:

Լ ի ւ ս ի.—Միքայէլ, յիշում էք մեր փոքրիկ կոխները: Մի անգամ դուք ինձ անխելք ու յամառ երեխայ անւանեցիք:

Մ ի ք ա յ է Լ.—Միթէ այդչափ խիստ բառերով արտայայտուեցի:

Լ ի ւ ս ի.—Ինչո՞ւ էք դարձանում: Չէ՞ք յիշում միթէ. աւելի խիստ էլ էիք լինում:

Ա ր ւ ա մ.—Դուք երբեմն քիչ էր մնում, որ ծեծէիք իրար:

Լ ի ւ ս ի.—Բայց ինչպէս էիք դուք այն ժամանակ վրդովւում, որ ես այնքան քիչ բան գիտեմ, թէ ինչպէս եմ դատարարակւած... Տէր Աստուած:

Մ ի ք ա յ է Լ.—Այո, այո: Մի անգամ նոյն իսկ ես խնայի ձեր ձեռքից ինչ որ մի յիմար գիրք և շարտեցի պատուհանից:

Լ ի ւ ս ի.—Իսկ յիշում էք ինչպէս բարկացաք դուք, երբ ես առանձին ապրումով յայտնեցի. «այդ ի՞նչ քրքրւած խօսք է իդիալ ասածը, իմ կարծիքով դա ոչինչ չը նշանակող մի խօսք է»: Դուք, անսպասելի, սաստիկ բարկացաք ու բացականչեցիք՝ «Իդէալը—դա այն բանն է, որ մարդուն դարձնում է մարդ»:

Մ ի ք ա յ է Լ.—Այդ էլ եմ յիշում:

Լ ի ւ ս ի.—Իսկ իմանում էք՝ թէ ինչպատահեց յետոյ: Ես այդ դարձածքը զրեցի յուշատետրիս մէջ: Իսկ ներքեւում նշանակեցի.—Միքայէլի աֆորիզմներից:

Մ ի ք ա յ է Լ.—Միթէ. դա սրտաշարժ է:

Ա ր ւ ա մ.—(վեր կենալով. յանկարծ) Ա՜յ, ա՜յ, ա՜յ, գրողը տանի...

Մ ի ք ա յ է Լ.—Ի՞նչ պատահեց:

Ա ր ւ ա մ.—Պօքրով եղայ և բոլորովին մոռացայ, որ մի գործ ունեմ, պէտք է գնամ «Կեանքի» խմբագրատունը: (նախում է ժամացոյցին): Կարգին ուշացել եմ, վեց և կէսն է, մինչև անգամ աւելի: Լիւսի, ես այնտեղից ուղղակի կը գամ թատրոն: Ա՜հ, հա, հապա ի՞նչպէս անհնր: Միքայէլ, մենք այս երեկոյ թատրոնումն ենք, մինչդեռ ես այնպէս կուզենայի քեզ հետ անցկացնել երեկոն:

Մ ի ք ա յ է Լ.—Ե, ի՞նչ կայ որ: Այդ կարող ենք շատ լաւ յարմարեցնել: Երևի կարելի կը լինի տոմսակ գտնել:

Ա ր ւ ա մ.—Ի հարկէ, կարելի է: Ուրեմն այդ էլ եղա:

Մ ի ք ա յ է Լ.—Ի՞նչ են ներկայացնում:

Լ ի ւ ս ի.—Շնիրտցիների «Հէքեաթը»: Բայց դուք երևի յոգնած կը լինէք ճանապարհից:

Մ ի ք ա յ է Լ.—Ժամանակ կուենամ հանգստանալու: Իսկ այժմ ես էլ պիտի շտապեմ հիւրանոցս: Թէ չէ ճանապարհորդական հագուստով եմ:

Ա ր ւ ա մ.—Իսկ դու հրտեղ ես իջեանել:

Մ ի ք ա յ է Լ.—Համարեա ձերտան կպած... երկու տուն վերև:

Ա ր ւ ա մ.—Ահա, գիտեմ: Հա, իսկապէս, մեզ մօտ բոլորովին ազատ սենեակ կայ: Տեղափոխւիր մեզ մօտ:

Մ ի ք ա յ է Լ.—Է՞լ ինչ:

Ա ր ւ ա մ.—Ի հարկէ. տեղափոխւիր: Ուղիղ չեմ ասում, Լիւսի:

Լ ի ւ ս ի.—Իրաւ, դա շատ լաւ կը լինի:

Ա ր ւ ա մ.—Դու մի քաշւիր: Ասենք, այդ մասին յետոյ կը խօսենք: Ե, ես գնացի: Գալիս ես, Միքայէլ:

Մ ի ք ա յ է Լ.—Այո, այո: Ես շատ բան ունեմ անելու, դեռ իրերս չեմ բացել: Սկիզբը քանիտե՞ն է:

Լ ի ւ ս ի.—Ութին:

Մ ի ք ա յ է Լ.—Շատ բարի: Ես կարգի կը բերեմ ինձ և ապա կը գամ ձեր յետերից, տիկին:

Ա ր ւ ա մ.—Դէ գնանք, քիչ խօսաւ...

Մ ի ք ա յ է Լ.—(Լիւսիին) Առ այժմ:

(Բեմի ետեւում՝ զանգի ձայն):

Ա ր ւ ա մ.—Ձանգ: Ո՞վ պէտք է լինի:

Լ ի ւ ս ի.—Ես ինչ գիտեմ:





(Երկուսն էլ ահա՞նք են դնում նախասենեակից լուող ձայներին: Լըսում է Հեղինէի ձայնը. «Տանն է, սասցէք որ ես եմ»:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Հա՛, Հեղինէի ձայնն է:

Ա. Բ. Բ. Ե. Ի. — Այո՛, այո՛: Նա մեզ կուշացնի: Աւելի լաւ է անցնենք կտրինետի դռնով: Գնանք, դնանք:

(Արբամը և Միքայէլը անցնում են կտրինետը, և սպասելով մի քիչ, մինչև որ Հեղինէն հիւրասենեակ մտնի, հեռանում են:

## ՁԱՐԴԱՐԴ ՏԵՍՒԼ

(Ներս է մտնում Հեղինէն)

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Բարե, Լիւսի:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Ահ, այդ դժւ ես:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Ես մի յանձնարարութիւն ունեմ անելու քեզ: Ես սաստիկ շտապում եմ... Ներքեում ինձ սպասում են... Ի՞նչ է, Արբամը տանը չէ:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Հէնց այս րոպէիս գնաց:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Ահ, որքան գործեր ունեմ անելու այսօր... Չափից դուրս շատ... Ես արդէն չորս տուն եմ մտել... Որքան շտապում եմ, որքան...

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Դա ասա, ինչու՞նք է բանը... Հանկիր:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Ո՛չ, ո՛չ, փողոցում ինձ սպասում է մի երիտասարդ: Ա՛հ, ինչ ծիծաղելի է, եթէ իմանայիր... Նա շատ տա. բորինակ է... ես ոչ մի կերպ չը կարողացայ համոզել նրան, որ պէս զի վերե բարձրանայ. չափից դուրս քաշում է: Նա ասում է թէ վախենում է քեզնից... Թէ դու շատ բարձր ես պահում քեզ: Ես նրան հաւատացնում էի, համոզում... Ահ, որքան շտապում եմ: (նայում է ժամացույցին) Ա՛յ, այ... շուտով եթէ կը լինի, քառորդ է պակաս, հաշվաւոր է վազել: Դէհ, ցտեսութիւն, սիրելիս:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Բայց սպասիր Հեղինէ: Յանձնարարութիւնդ չարեցիր:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Միթէ, Ի՞նչ պրտմն եմ... Գիտես, վերջին ժամանակներս ես սաստիկ ցրտած եմ դարձել: Երեւակայիր, մօտ օրերս մի այսպիսի դէպք պատահեց...

Լ. Ի. Լ. Ե. Ի. — (ընդհատելով) Ունի՞րք է յանձնարարութիւնը, Հեղինէ:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Ա՛հ, հա՛: Ան՛նա մօրաբերո՞ջ կողմից: Նա խընդ-

րեց ասել քեզ և Արբամին: որ եկող երեքշաբթի հրաւիրում է ձեզ իր մօտ...

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Ի՞նչ կայ:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Առանձին ոչինչ... Մի թեթեւ երեկոյթ... Ասենք հիւրեր բաւականաչափ լինելու են: Հա՛, Աննա մօրաբերո՞ջ պատւիրեց ինձ, որ գնալուցս առաջ հաստատ խօսք վերցնեմ քեզնից:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Չէ, խօսք տալ չեմ կարող:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Ինչո՞ւ:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Այնտեղ ձանձրալի կը լինի:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Երբէք: Ուրախ կանցնի: Եւ ի միջի այլոց, երեկոյթում լինելու է մի պարոն, որի հետ պատահելուց դու, երեւի, չէիր հրաժարել:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Ի՞նչ պարոն է:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Մեր ընդհանուր բարեկամը:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Մեր ընդհանուր բարեկամը:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Այո՛, այո՛: Դէ, ես գնացի...

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Սպասիր, Հեղինէ: Ո՞ւմ մասին ես դու ասում:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Հետաքրքրեցիր: Ո՛ր, նա եկել է շատ հեռուից:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Ո՞վ է:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Լաւ, Տէրը քեզ հետ, կաւեմ: Միթէ մինչև հիմա զլիւի չընկար: Ռուբէնը, մեր Ռուբէնը... Յիշում ես ծիծաղում է):

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Ռու...:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Այո՛, այո՛: Զարմացած:

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Անկարելի է:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Աղնիւ խօսք: Նա նորերս եկել է: Եւ ինչո՞ւ է անկարելի, չեմ հասկանում: Ե՛, ցտեսութիւն: Խեղճ իմ կաւալեր, երեւի արդէն հոգին փչել է երկար սպասելուց...

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Սպասիր, ասա ինձ...

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Ո՛չ, ո՛չ: Յետոյ կիմանաս: Ես շտապում եմ: Ցտեսութիւն (գնում է գէպի դուռ):

Լ. Ի. Լ. Ե. Ի. — Հեղինէ:

Հ. Ե. Դ. Ի. Ե. — Ցտեսութիւն, ցտեսութիւն (դուրս է վազում):

Լ. Ի. Լ. Ե. Ի. — (գնում է նրա ետեւից) Հեղինէ, սպասիր, (տեսնելով որ նա գնաց արդէն, վերադառնում է) Ի՞նչ յիմար աղջիկ է... (քայլում է սենեակում) Ուրեմն եկել է Ռուբէնը... Ո՛րքան տարօրինակ է...



Ես ամբողջ օրը առանց որևէ պատճառի մտածում էի նրա մասին... Տարօրինակ է... (կանգ է առնում սենեակի մէջ տեղը) Ինչպէս մոռթ է (զանգահարում է):

#### ՀԻՆԳՆԵՐՈՐԴ ՏԵՍԻՒ

(Ներս է մտնում աղախինը)

Աղախին.— Ձանգ տւիք:

Լիւսի.— Այո, վառիւր լամպը: Սարսափելի մոռթն է: (Լիւսին նստում է դաշնամուրի առաջ և նւագում է: Աղախինը վառում է լամպը, ուզում է հեռանալ, բայց այդ բոլորին բեմի յետեւից լսում է զանգի ձայն):

Աղախին.— Ձանգ են տալիս: Ընդունեմ:

Լիւսի.— Այո, ի հարկէ: (Աղախինը գնում է նախասենեակ):

#### ՎԵՅԵՐՈՐԴ ՏԵՍԻՒ

(Մտնում է Ռուբէնը)

Ռուբէն.— (Շատ կարճատեւ, բայց նշմարելի լուսթիւնից յետոյ) Բարեւ ձեզ:

Լիւսի.— (Անթաքթ նայելով նրա վրա) Ո՞վ էք:

Ռուբէն.— Միթէ՞ չէք կարողանում ճանաչել:

Լիւսի.— Ո՞րտեղից եկաք, ինչո՞ւ համար եկաք:

Ռուբէն.— Ինչպէս թէ ինչու համար: Ձեզ հետ մենք լաւ ծանօթ ենք: Մօտ ժամանակներս վերադարձել եմ հայրենիք և ահա եկայ ձեզ այցելելու:

Լիւսի.— (Կատարելապէս տիրապետելով իրան) Իսկապէս ես յիմարութիւններ եմ ասում... Ներեցէք ինձ: Ձեր անսպասելի կերպով յայտնւելը այնպէս զարմացրեց ինձ, որ ես... նստեցէք խնդրեմ: Շատ ուրախ եմ... վաղձեց էք եկել:

Ռուբէն.— (նստում է) Այո, արդէն մօտ մի ամիս է:

Լիւսի.— Լաւ, բայց ինչպէս է, որ... ոչ ես, ոչ էլ մեր ծանօթները տեղեկութիւն չունէինք այդ մասին:

Ռուբէն.— Սկզբում ես չէի երևում մեր նախկին ծանօթներից ոչ մէկին: Միայն ձեր մօրաքոյրը—մօրաքոյր Աննան—գիտէր, բայց ես խնդրել էի առայժմ ոչ ոքի չասել:

Լիւսի.— Ինչո՞ւ:

Ռուբէն.— Ես եկել եմ այստեղ, մասնաւորապէս ինձ վերաբերող գործի համար, և ուզում էի նորից դնալ, հէնց որ գործերս վերջացնեմ, ոչ ոքի աչքին չերևալով:

Լիւսի.— Ես ձեզ չեմ հասկանում. ինչո՞ւ այդպէս:

Ռուբէն.— (Մի փոքր լռելուց յետոյ) Թոյլ տւէք ինձ չըխօսել այդ մասին:

Լիւսի.— Ա՛հ, ներեցէք: Ես իրաւ, որ չափազանց եմ հետաքրքրւում:

#### ԿԱՐՃԱՏԵԼ ՊԱՌԱՂԱՍ

Ռուբէն.— Դէ՛հ, ահաւասիկ, ութը տարւայ ընդմիջում մից յետոյ, մենք դարձեալ հանդիպեցինք իրար: Դուք վաղուց արդէն ամուսնացած էք:

Լիւսի.— Իսկ դուք: Ձէք ամուսնացել:

Ռուբէն.— Ոչ, ես չեմ ամուսնացել: Ես մնացել եմ միեւնոյն արջի բոթոթը: Յիշում էք, դուք ինձ այդպէս էիք անւանում... Այո: Եւ ահա ես ձեզ մօտ եմ... Մի որևէ կէս ժամ սրանից առաջ, ես ամենեւին չէի ենթադրում, թէ կը տեսնեմ ձեզ Պատահաբար անցնում էի ձեր փողոցով: Հանդիպեցի Հեղինէին: Նա հէնց նո՞ր ձեզ մօտ էր եղել: Ուզում էի անցնել մօտից, բայց նա ինձ ճանաչեց: Մի քանի բոլորէի մէջ, նա ինձ հազար ու մէկ բաներ կարողացաւ ասել...

Լիւսի.— Այո, նա այդ կարողանում է:

Ռուբէն.— Նախ և առաջ, նա ինձ յայտնեց, որ արդէն բոլոր ծանօթները իմանում են, որ ես այստեղ եմ: Բանից երևում է, որ ձեր մօրաքոյրը իր խոստումը չէր պահել: Հեղինէն, ի միջի այլոց, ասաց ինձ, որ դայիս է ձեր մօտից... որ դուք մեռնակ էք տանք: Ես մտածեցի. նա մենակ է, ինչո՞ւ չըզնամ նրա մօտ: Եւ ահա...

Լիւսի.— Բայց դա տարօրինակ է: Դուք եկաք, որովհետեւ ես մենակ եմ:

Ռուբէն.— Այո:

Լիւսի.— Բայց ինչո՞ւ:

Ռուբէն.— Անկեղծ ասած՝ ես չէի կամենալ պատահել ձեր ամուսնուն:

Լիւսի.— Դուք չէիք կամենալ պատահել Արքամին:

Ռուբէն.— Իսկոյն կը բացատրեմ ձեզ: Ձեր ամուսնու հետ մենք վաղուցայ ծանօթներ ենք: Միթէ նա ձեզ չէ ասել:

Լիւսի.— Ոչ: Ես նոյն իսկ չէի ենթադրում, որ Արքամը գիտէ ձեր գոյութեան մասին:



Ռ ու բ է ն.—Ինչպէս չէ: Ես նրա հետ ծանօթացայ Պե-  
տերբուրգում այն ժամանակ, երբ նա դեռ չէր էլ ճանաչում ձեզ:  
Այն ժամանակ նա ինձ շատ դուր էր գալիս: Նրա հայեացքները,  
նրա համոզմունքները ուղղակի վարակեցին ինձ: Բայց այնուհե-  
տե, երկար ժամանակ անցնելուց յետոյ, երբ Արքամը այլ ևս  
այնտեղ չէր, իմ հայեացքները արմատական կերպով փոխվեցին,  
և ես, վերջ ի վերջոյ, դարձայ բոլորովին հակառակ համոզմունք-  
ներ ի տէր մարդ: Ճշմարիտ է: Արքամը այդ բոլորի մասին տե-  
ղեկութիւն չունէր՝ մինք վաղուց արդէն բաժանուած էինք իրարից,  
այնուամենայնիւ, ես ինձ համար անյարմար էի գտնում զա/  
Արքամի մօտ, որի դէմ ես նոյն խիստ դրեկ եմ մի քանի յօդածներ:

Լ ի ւ ս ի.—(արագ) Ո՞րտեղ են տպագրւում այդ յօդածները:

Ռ ու բ է ն.—«Լոյսի» մէջ:

Լ ի ւ ս ի.—Ursus ստորագրութեամբ:

Ռ ու բ է ն.—Ո՞րտեղից գիտէք դուք այդ: «Լոյսի» մէջ  
չէ՞ որ ուրիշ մարդկանց յօդածներ էլ են եղել նրա դէմ:

Լ ի ւ ս ի.—(նայելով նրան) Այո, բայց չէ՞ որ Ursus նշանա-  
կում է՝ արջ:

Ռ ու բ է ն.—(զարմացած) Պէտք է ասած, դուք շատ խորա-  
թափանցն էք: Այո, ես ընտրել եմ հէնց այդ ծածկանունը: Ես  
ստորագրում էի այն անունով, որը մի ժամանակ դուք ինձ տել  
էիք: Չէ՞ որ դուք այն ժամանակ ինձ արջի բոթոթ էիք անա-  
նում...

Լ ի ւ ս ի.—(կանգնում է, լռութիւնից յետոյ) Հեռացէ՛ք այստեղից:

Ռ ու բ է ն.—(վեր կենալով) Ի՞նչպէս...

Լ ի ւ ս ի.—Հեռացէ՛ք: Ես չեմ կարող թոյլ տալ ինձ խօսե-  
լու մի մարդու հետ, որը իմ ամուսնուն հայոցում էր մամուլի մէջ  
փողոցային հայոցանքներով: Դուք ոչ միայն թշնամի էք հա-  
մոզմունքով... Դուք բարոյապէս մի հրէշ էք: Իսկ այդպիսի մի  
մարդու հետ, ներեցէ՛ք, ես խօսել չեմ կարող:

Ռ ու բ է ն.—Ես, խոստովանում եմ, որ չէի սպասում այդ:  
Է՛հ ինչ արած... Ներեցէ՛ք ինձ... բայց ինձ թւում է, որ դուք  
իրաւացի չէք: Ենթադրենք նոյն խիստ, որ ես հայոցիւ եմ Արքա-  
մին, բայց... ձեզ ինչ... Ես Արքամի թշնամին եմ, իսկ ձեզ մօտ  
գալիս եմ իբրեւ մի հին, լաւ բարեկամի մօտ:

Լ ի ւ ս ի.—Բայց չէ որ ես այդ մարդու կիներ եմ: Նրա  
ամեն մի խօսքը, ամեն մի քայլը ինձ համար սրբութիւններ են:  
Եթէ դուք պղծում էք իմ սրբութիւնը, այն ժամանակ...

Ռ ու բ է ն.—Ինձ համար դուք իմ թշնամու կիներ չէք,  
այլ մանկութեանս ընկեր... և... և ոչ միայն ընկերը...

Լ ի ւ ս ի.—(այլ ևս չը կարողանալով դադել իրան, ջղախորէն) Ա՛հ  
մրտեղից եկաք դուք: Այս ութ տարիների ընթացքում, այսօր,  
երկու ժամ սրանից առաջ միայն, ես առաջին անգամ դիպցի  
ինձ ազատ ձեր մասին յիշելուց... և, յանկարծ, դուք եկաք...

Ռ ու բ է ն.—Լիւսի, նշանակում է, դուք այնուամենայնիւ  
ինձ մտաբերում էիք այդ ամբողջ ժամանակը:

Լ ի ւ ս ի.—Ա՛հ, մրտեղից եկաք դուք... Ինչո՞ւ եկաք:

Կարճատեւ պատուգա:

Ռ ու բ է ն.—Ես եկայ այնտեղից, որտեղից հեռացաք  
դուք... Ես եկայ, որպէս զի վերադարձնեմ ձեզ այնտեղ:

Լ ի ւ ս ի.—(կտառի հայեացք է ձգում նրա վրա, ապա մօտենում է  
դանդին և դանդահարում)

#### ԵՐԹԵՐՈՐԴ ՏԵՍԻԼ

(Ներս է մտնում աղախինը)

Լ ի ւ ս ի.—(աղախնուն) Պարոնը ուղում է գնալ: Օգնեցէ՛ք  
պարոնին հագնել վերաբիւն:

Ռ ու բ է ն.—(նայելով Լիւսիին) Ենթահակալ եմ: Այսօր շող  
եղանակ է: Ես առանց վերաբիւնի եմ: Ցտեսութիւն: (Ռուբէնը հե-  
ռանում է, աղախինը նոյնպէս:)

Լ ի ւ ս ի.—(մնալով մենակ, կանգնած անշարժ նայում է դռանը, որը  
փակեց Ռուբէնի յետեից) Երանդ է... Ի՞նչ օր է այսօր... Կարծես ինչ  
որ մորիկ բարձրացաւ: (հառաչելով ընկնում է աթոռի վրա)

#### ՈՒԹԵՐՈՐԴ ՏԵՍԻԼ

(Ներս է մտնում Միքայէլը)

Մ ի ք ա յ է լ.—Ահաւասիկ ես պատրաստ եմ: Ուղիղ ժա-  
մանակին եմ եկել:

Լ ի ւ ս ի.—Ա՛հ, այդ դուք էք:



Մի քայլ էլ.—Այո, գնալու ժամանակն է։ Ի միջի այլոց, այս բռնակն ձեզ մօտ որևէ մարդ կան։

Լիւսի.—Ի՞նչ կայ որ։

Մի քայլ էլ.—Մուտքի դրան մէջ ես հանդիպեցի մի պարոնի։ Ես, համարեա, հաւատացած եմ, որ դա իմ մի ծանօթն է։ Բայց նա չը ճանաչեց ինձ։ Եթէ չեմ սխալուում, դա պէտք է որ լինէր... Ռուբէն... Դժբաղդաբար աղգանուէր չեմ յիշում...

Լիւսի.—Այո, դա նա էր։

Մի քայլ էլ.—Միթէ Ռուբէնն էր։ Մի ժամանակ մենք բաւական լաւ ծանօթներ էինք։ Վաղուց է եկել։

Լիւսի.—(մտածող) Այո... կարծեմ... Չը գիտեմ, կարծեմ մօտ մի ամիս։

Մի քայլ էլ.—(նայելով Լիւսիին) Ի՞նչ է պատահել ձեզ, Մի ժամայ ընթացքում դուք բոլորովին փոխել էք։ Դուք սաստիկ գունատ էք։

Լիւսի.—Միթէ։ Այդ ոչինչ... Մի փոքր վատ եմ զգում ինձ։ Ուրեմն, դուք ասում էք՝ թատրոն գնալու ժամանակն է։ Դէ գնանք։ (Վեր է կենում և շտապով գնում դէպի աջ, բայց դրան մէջ կանգնում է) Միքայէլ... Որքան տարօրինակ է... ես յիշեցի ձեր ափօրիզմը... Իդէալ դա այն բանն է, որը մարդուն դարձնում է մարդ։

Մի քայլ էլ.—Այո.

Լիւսի.—Ասացէք... Իսկ եթէ մարդը ունեցել է մի շատ վեհ բան... և յանկարծ կորցրել է այն... այս դէպքում ի՞նչ պէտք է անել։

Մի քայլ էլ.—Իմ կարծիքով, միայն մի ելք է մնում՝ մահ։ Բայց...

Լիւսի.—Այո՞ դուք կարծում էք։ (լուսին) Ես այս բռնակն պատրաստ կը լինեմ։ Տեսնում եմ, դուք զարմացած էք... այդ ոչինչ... Վայրկենաբար անցաւ մտքովս... ոչինչ։ Ես իսկոյն պատրաստ կը լինեմ։ (հեռանում է դէպի աջ, առաջին գնումով)։

Մի քայլ էլ.—(զարմացած թթւում է ուտերը)

Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Յ. Ր.

## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը ներկայացնում է մի փոքրիկ կիսաշրջանաձև սենեակ մօրաքույր Աննայի տանը։ Որովհետև այդ երեկոյան տանը հիւրեր կան, ուստի այդ սենեակը յատկացւած է ծխելու համար։ Սենեակում մեծ քանակութեամբ բաղկաթոռներ, աթոռներ և բաղմոցներ կան։ Մնացած կահկարասիքները, ինչպէս երևում է, դուրս են տարւած։ Խորքում կայ մի մեծ պատուհան, որը նայում է դէպի փողոց։ Ձախ կողմում բոլորովին բացւած դուռը տանում է դէպի առատութեամբ լուսավորւած հիւրասենեակը, որտեղից յաճախակի լսում են աղմուկ՝ խօսակցութիւն և այլն։ Ձախ կողմից ավանդենայում պատրաստւած է սեղան խմիչքներով և թեթիւ ուտելիքներով։ Այդ սենեակը լուսավորւած է ելէքտրական բաղմաթիւ մանրիկ լամպարներով։ Պատերից կախւած են մի քանի թանկագին պատկերներ։ Առհասարակ սենեակի կահավորութիւնից, կարգ ու ստորջիւղ երևում է, որ այդպեղ ապրում են ապանով մարդիկ։

### ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻՆ

(Բեմի վրա են երեք հոգի։ Մի աստիճանաւոր, մի նիհար և մէկ էլ մի հաստ պարոն)

Աստիճանաւոր.—Չը գիտէ՞ք արդեօք, պարոններ, շուտով կը լինի ընթրիքը։ Ինձ ձանձրացրեց սպասելը։ Հը, Ինչպէ՞ս էք կարծում։

Նիհար պարոն.—Չը գիտեմ, ճշմարիտ։

Նիհար պարոն.—(շարունակելով առաջուց սկսած խօսակցութիւնը) Եւ ահա... տեսնում եմ, որ այդ բժիշկն էլ ոչինչ չէ հասկանում և միայն դուր տեղից փող է ստանում։ Չէ, մտածում եմ ինքս ինձ, չեմ կարող խաբել ինձ։ Վեր կացայ գնացի մի ուրիշի մօտ։ Դա նոյնպէս ինձ տարաւ ու բերաւ ամբողջ երեք ամիս, և ի հարկէ, նոյնպէս չը բժշկեց։ Մի խօսքով ահա այդ ձեռով ես ամբողջ երկու և կէս տարի գնում էի մի բժշկից՝ միւսի մօտ... մի բժշկի մօտից՝ միւսի մօտ։ Վերջապէս գտայ իմ ախտի համար բժշկին։ Հիանալի բժշկում է, միայն ափսոս, որ թանգ է վերցնում։



Հ ա ս տ ալ ա թ ո ն. — Թանգ է վերցնում:

Ն ի հ ա թ ալ ա թ ո ն. — Այո, թանգ: Ասենք՝ ես չեմ էլ խնայում: Ախր երկու ամիս է արդեն, որ ես ինձ բոլորովին առողջ եմ զգում: Տեսնում եք, ինչպես ես այժմ չաղացել եմ:

Հ ա ս տ ալ ա թ ո ն. — Չաղացել եք: (դիտում է նրան) Հմմ... այո... մի քիչ...

Ա ս տ ի ճ ա ն ա լ ո թ. — Աստուած վկայ քաղցից մեռայ: Ե՞րբ պիտի լինի ընթերցել:

Հ ա ս տ ալ ա թ ո ն. — (նհարին) Վերջացրի՞ք ծխելը:

Ն ի հ ա թ ալ ա թ ո ն. — Վերջացրի: Գնանք:

Հ ա ս տ ալ ա թ ո ն. — Ի հարկէ: Ի՞նչ կայ այստեղ: (երկուսն էլ դնում են դէպի հիւրասենեակը):

Ն ի հ ա թ ալ ա թ ո ն. — Հիանալի, շատ լաւ բժիշկ է: Այժմ ստամոքսս էլ կանոնաւոր է դործում: Եթէ կամենաք, ես կը տամ ձեզ նրա հասցեն: Այն դէպքում, եթէ հիւանդանալու լինէք (անցնում են հիւրասենեակը)...

#### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻՆ

(Հիւրասենեակից դալիս է Միքայէլը, թաշկինակով հովհարելով դէմքը: Մօտենում է սեղանին, մի ինչ որ խմիչք է խմում):

Ա ս տ ի ճ ա ն ա լ ո թ. — Ներեցէք խնդրեմ, չը դիտէք, շնորհակալ եմ լինի ընթերցել:

Մ ի ք ա յ է լ. — Ճշմարիտ, չը գիտեմ:

Ա ս տ ի ճ ա ն ա լ ո թ. — Ձեւ հասկանում: (բարկացած թոթւում է ուտերը և դնում հիւրասենեակը. Միքայէլը ծխում է, մօտենում է լուսամուտին և նայում):

#### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԻՆ

(Քիչ ժամանակից յետոյ սենեակն է մտնում Հեղինէն: Միքայէլը չէ նկատում նրան: Հեղինէն նայում է շուրջը, ապա, կամաց ու ծածուկ, առանց աղմուկի մօտենում է նրան):

Հ ե ղ ի ն է. — Պարոն պրօֆեսսոր:

Մ ի ք ա յ է լ. — (ցնցւելով) Ի՞նչ. Ա՛խ, այդ դուք եք... Ես, ես ճշմարիտ, վախեցայ:

Հ ե ղ ի ն է. — Ախ, ներեցէք: Ի՞նչ էք անում այստեղ: Եւ առհասարակ ի՞նչ սենեակ է սա: Ինչո՞ւ համար է:

Մ ի ք ա յ է լ. — Այստեղ ծխում են:

Հ ե ղ ի ն է. — Իսկ այն սենեակը ինչո՞ւ համար է:

Մ ի ք ա յ է լ. — Միթէ՛ պարզ չէ, օրիորդ: Ահա, օրինակ ես: Նեղում էի շոգից, խմել էի ուզում, և ես այստեղ ծարաւս կտարելու համար խմիչք գտայ:

Հ ե ղ ի ն է. — Հասկանում եմ, հասկանում եմ: Այստեղ շատ լաւ է, այդպէս չէ, պարոն պրօֆեսսոր:

Մ ի ք ա յ է լ. — Այսօր դուք ինձ չորրորդ անգամն է, որ պրօֆեսսոր էք անւանում: Ինչո՞ւ:

Հ ե ղ ի ն է. — Դուք մինչև իսկ համարեցի՞ք էլ:

Մ ի ք ա յ է լ. — Ոչ, ուղղակի մտաբերեցի: Բայց լուրջ, ինչո՞ւ էք դուք ինձ պրօֆեսսոր անւանում:

Հ ե ղ ի ն է. — Այդ միթէ՛ անախճո՞ժ է ձեզ համար:

Մ ի ք ա յ է լ. — Ոչ. ինձ միայն տարօրինակ է թւում՝ թէ ինչո՞ւ էք դուք ինձ այդպես անւանում:

Հ ե ղ ի ն է. — Լաւ, եթէ դուք այդքան ուզում էք իմանալ, կասեմ: Առաջինը դուք պրօֆեսսորական դէմք ունէք:

Մ ի ք ա յ է լ. — Միթէ... Իսկ երկրորդը:

Հ ե ղ ի ն է. — Իսկ երկրորդ, ես լսել եմ, որ դուք մի ինչ որ գիտնական ուսումնասիրութիւն էք անում:

Մ ի ք ա յ է լ. — Որտեղից դիտէք այդ:

Հ ե ղ ի ն է. — Ինձ ասաց Լիւսին: Ահ, իսկապէս, ինչպէս է ձեզ դուր գալիս Լիւսին: Հետաքրքրական տիկին է, չէ՞: Ափսոս միայն, որ նա իր մասին շատ մեծ կարծիք ունի:

Մ ի ք ա յ է լ. — Ի՞նչ էք ասում: Ամենեին:

Հ ե ղ ի ն է. — Գոնէ այդպէս է ինձ թւում: Իսկ ինչպէս էք դուք կարծում նա խելօք է:

Մ ի ք ա յ է լ. — Նա և հետաքրքրական է և խելացի:

Հ ե ղ ի ն է. — (բարկացած) Այո՞... Իսկ իմ կարծիքով, նա այնքան էլ խելօք չէ, որքան սիրում է խելօք ձևանալ:

Մ ի ք ա յ է լ. — Լաւ, թողէք: Ինչո՞ւ էք դուք այդպէս տրամադրւած դէպի նա:

Հ ե ղ ի ն է. — Ձը գիտեմ: Նա ինձ դուր չէ գալիս: (կարճատև լուսիւնից յետոյ) Իսկ դուք ուղղակի նրանով աւարած էք: Խոստովանեցէք, որ դուք հիացած էք նրանից:—

Մ ի ք ա յ է լ. — Ձեւ հասկանում, ի՞նչ բանի հիման վրա



էք ասում դուք այդ: Հաւատացած եղէք, որ ես ոչ մէկով տարած  
հիացած չեմ:

Հ ե ղ ի ն է.—(խորամանկօրէն) Ո՞չ մէկով:

Մ ի ք ա յ է լ.—Ոչ մէկով:

Հ ե ղ ի ն է.—(ժպտալով) Ես ձեզ հաւատում եմ:

Մ ի ք ա յ է լ.—Իրաւունք չունէք չը հաւատալու:

Հ ե ղ ի ն է.—(կօկէտաբար նայելով նրա աչքերին) Բայց եւ այն-  
պէս, միթէ ոչ մի կին ձեզ դուր չէ գալիս: Այդ անկարելի է:  
Դուք թագցնում էք: Դէ՛հ, խոստովանեցէ՛ք... Դուք կարող էք  
վստահանալ ինձ ամեն տեսակ դադարներ. ոչ որի չեմ պատմի:

Մ ի ք ա յ է լ.—Տէրը ձեզ հետ, ինչեք էք ասում:

Հ ե ղ ի ն է.—Դուք նոր ասացիք, որ ոչ մի կին ձեզ չէ  
հետաքրքրում: Իսկ ես: Չէ որ դուք ինձանով մի քիչ հետաքր-  
քրում էք:

Մ ի ք ա յ է լ.—Ձեզնով:—Ոչ, ամենահին:

Հ ե ղ ի ն է.—Պու, ինչ վասն էք: Դուք բոլորովին չը գի-  
տէք կանանց հետ խօսելու ձևը:

Մ ի ք ա յ է լ.—Ներեցէ՛ք, եթէ ես ձեզ վշտացրի: (Պատուզա ք  
Մտնում է մի երիտասարդ պարոն: Մտնում է:)

Հ ե ղ ի ն է.—Գիտէ՛ք ինչ:

Մ ի ք ա յ է լ.—Ոչ:

Հ ե ղ ի ն է.—Ես ամուսնանում եմ:

Մ ի ք ա յ է լ.—Իսկապէ՞ս... Շնորհաւորում եմ ձեզ, սրտանց  
չնորհաւորում եմ:

Հ ե ղ ի ն է.—Ինչ անտանելին էք դուք: (նեղացած հեռանում է  
մօտից)

Մ ի ք ա յ է լ.—Ձեմ հասկանում, ինչ պատճառով նեղացաք:

Հ ե ղ ի ն է.—Այն պատճառով... այն պատճառով, որ դուք  
պրօֆեսոր էք:

Մ ի ք ա յ է լ.—Ոչ, ես բոլորովին ձեզ չեմ հասկանում:

Հ ե ղ ի ն է.—(նորից մօտենալով) Ոչ, ոչ: Ես կատակ էի  
անում: Ես չեմ ամուսնանում:

Մ ի ք ա յ է լ.—Դա որ արդարեւ ափսոս: Ես արդէն սկսե-  
ցի ուրախանալ:

Հ ե ղ ի ն է.—Այդ արդէն դարձելի է: (հեռանում է Միքայէլի  
մօտից. դիմելով երիտասարդ պարոնին) Ուզում էք անցնել ինձ հետ:

Ե Ր Ի Ս Ա Ս Ր Դ.—Ուրախութեամբ, օրիորդ, ուրախու-  
թեամբ: (Թանցուկ գնում են):

Մ ի ք ա յ է լ.—(մենակ, լուռ ինքնիշխան) Հիմա... ]

## ԶՈՐՐՈՐԴ ՏԵՍՒՆ

(Հիւրասենեակից դալիս է Աբրամը)

Ա բ բ ա մ.—Դու այստեղ ես, Միքայէլ: Երևի փախել ես:  
Անտանելի է այնտեղ նստել: Ես քիչ մնաց որ խելագարւէի այն  
բոլոր խօսակցութիւններից: Դա ինչ որ կօշմարային մի բան է:  
Մ ի ք ա յ է լ.—Իսկապէս որ ձանձրալի է:

Ա բ բ ա մ.—Եւ ինչից դրդւած Լիւսին մտածեց այստեղ  
գալ, բաւական չէ, մեզ էլ հետը քարշ տալ: Առաջներում նա  
ինքը տանել չէր կարողանում մօրաքոյր Աննայի երեկոյթները,  
իսկ այժմ համարեա զօրով ստիպեց ինձ էլ գալ: Այդ դեռ ոչինչ:  
Նա ըստ երևոյթին, շատ լաւ է զգում իրան այստեղ, մինչև ան-  
գամ նստեց թուղթ խաղալու. ես չը կարողացայ դիմանալ, փախայ:

Մ ի ք ա յ է լ.—Ես էլ եկել եմ մի քիչ օդ ծծելու: Դահլի-  
ճում սոսկալի օդ է:

Ա բ բ ա մ.—(Միծաղելով) Այո... Օդ ծծելու:

Մ ի ք ա յ է լ.—Ինչո՞ւ ես ծիծաղում:

Ա բ բ ա մ.—Չէ որ, սիրելիս, ես նկատեցի այնտեղից, որ  
դու մենակ չես, այլ մի երիտասարդ օրիորդի հետ՝ Հեղինէի  
հետ: Էհէ, Միքայէլ, դժոյշ:

Մ ի ք ա յ է լ.—Գժե՞լ ես, ինչ է:

Ա բ բ ա մ.—(Միծաղելով) Լաւ, լաւ, ճանաչում ենք ձեզ: Ոչ,  
խոստովանիւր, դու մեծ աջողութիւն ունես կանանց շրջանում: Չէի  
սպասում. շարունակ կամ մէկն է քեզ հետ, կամ մի ուրիշը, մա-  
նաւանդ Հեղինէն:

Մ ի ք ա յ է լ.—Շատ օտարոտի աղջիկ է այդ Հեղինէն:

Ա բ բ ա մ.—Ինչ օտարոտիութիւն կայ այստեղ: Սիրահար-  
ւել է քեզ վրա, ահա բոլորը: Այո, այո, աջողութիւն ունես: Էհ,  
ինչ կայ որ... քո, ասենք, ժամանակն էլ է:

Մ ի ք ա յ է լ.—Դու ուզում ես ասել, ամուսնանալո՞ւ:

Ա բ բ ա մ.—Թէկուզ հէնց այդպէս:

Մ ի ք ա յ է լ.—(Միծաղելով) Հեղինէի հետ:

Ա բ բ ա մ.—Ո՛չ, ինչո՞ւ անպատճառ նրա հետ: Բայց մի  
որևէ ուրիշի հետ: Ամուսնացիր, եղբայր... միայն թէ...

Մ ի ք ա յ է լ.—Միայն թէ ինչ:



Ա. Բ. Բ. Կ. Կ. — Միայն թէ... նախ և առաջ համոզւիր, որ դու... որ դու չես սխալուում:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այսինքն, ի՞նչ բանում:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Մի ամուսնացիր այնպիսի կնոջ հետ, որը թէկուզ մի աստիճանով ցածր է կանգնած քեզից: Կին առ ամեն բանում քեզ հաւասար ամեն բանում: Հասկանում ես, ամեն բանում:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Ինչպէս տարօրինակ կերպով ես դու այդ ասում:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Այո, այո... ամուսնացիր այնպէս, որ յետոյ ոչ մի բանից վախ չունենաս... մտաւորապէս նիւթ չը դարձնես: Դու չը դիտես թէ ինչ տանջանք է այդ... ամբ, ինչպիսի տանջանք...

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Ոչինչ չեմ հասկանում: Քեզ ինչ որ բան է պատահել այսօր:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ոչ այսօր: Վաղուց է այսպէս: Հասկանում ես դու, ես վախենում եմ, անդիտակցօրէն վախենում եմ: Ինքս էլ չը գիտեմ ինչու, վախենում եմ...

#### Պատուգա

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Բախտաւորութիւնը անտառային մի թռչնակ է, որին դարան մտած սպասում է որսորդը: Ես բռնել եմ այդ թռչնակին ձեռքումս: Նա ի էմն... բայց կարող է թռչել... բախտաւորութիւնը՝ թռչնակ, հօը:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — (Կտրճաւ լռութիւնից յետոյ) Հըմ... այո, լաւ չէ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — (հաղիւ լսելի ձայնով) Շատ վատ է...

#### Պատուգա

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այդ բոլոր դատարկ բան է:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ո՛չ, ո՛չ: Վերջին ժամանակներս, այդ միտքը շատ յաճախ է ծագում իմ գլխում: Ես սկսում եմ մտածել, որ Լիւսիի վրա դրել եմ ինչ որ մի ծանր բեռ... Ես վախենում եմ, որ անկարող լինի տանել այդ: Վախենում եմ, որ յոգնէ... և... այն ժամանակ... Վերջին ժամանակներս, զանազան մանր բաներում, ես նկատում եմ, որ Լիւսին սկսում է ինչ որ մի ձանձրոյթ դգալ, և դա աճում է օրէցօր: Երբեմն նա սաստիկ ջղային

է դառնում և մեր մէջ տեղի են ունենում անհամաձայնութիւններ, մինչև իսկ կռիւներ: Ճիշտ է, Լիւսին աշխատում է զսպել իրան, բայց չէ որ ես նկատում եմ: Հասկանում ես, ի՞նչ եմ ուզում ասել:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այո: Բայց թող դատարկ բաների մասին մտածելը: Յամենայն դէպս, դու վախենալու կարիք չունես: Եթէ դու վախենում ես, ուրեմն ուրիշները ինչ պէտք է անեն:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Այո, այո: Ուղիղ չէ արդեօք: Ի հարկէ, դա բոլորակաւ տատանումն է, ի հարկէ, այդ յիմարութիւն է: Եւ վերջապէս, ի՞նչի մասին մտածել: Քանի որ իմ բախտաւորութիւնը իմ ձեռքումն է: Ես էլ կապրեմ նրանով, կը հրճեմ այդ քմահաճ, գեղեցիկ թռչնակով: Այսօր նա իմն է:

#### Պատուգա

Մ. Ի. Բ. Կ. Կ. — (դիտմամբ կամենալով փոխել խօսակցութեան նիւթը) Բաւականաչափ հիւրեր կան այսօր:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Եւ ի միջի այլոց, գիտե՞ս ով է այստեղ, երեկոյթում:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Ո՞վ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ռուբէնը:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այո, ես տեսայ նրան: Նոյն իսկ մի քիչ խօսեցի հետը:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ես էլ խօսեցի նրա հետ: Նա ինձ էլ աւելի պակաս դուր եկաւ, քան թէ մի բանի տարի սրանից առաջ: Բայց երեւակայիր, բանից դուրս է գալիս, որ նա շատ վաղուց ծանօթ է Լիւսիի հետ: Նրանք նոյնիսկ մեծացել են միասին: Ասենք, հազիւ թէ կարելի լինի շնորհաւորել Լիւսիին այդ տեսակ մանկութեան ընկեր ունենալու համար: Նա ինքը ըստ ինքեան գուցէ և վատ տղայ չէ, բայց և այնպէս՝ ինչ որ մի բան պակասում է նրան: Ինչ որ մի անհամակրելի բան կայ նրանում:

Մ. Ի. Բ. Կ. Կ. — Այո, խելօք տղայ չէ, դուրկ սկզբունքներին:



## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԻՒՆ

(Ներս է մտնում Աննան)

Ա. Ն. Ն. ա.—Դու աշտուղ ես, Աբրամ։ Դձուք նոյնպէս, պարոն Միքայէլ։ Իսկ ես շարունակ մտածում եմ՝ թէ ինչ եղաք դուք։

Ա. Բ. Բ. ա. մ.—Մի բոլորէի՞ր դուրս եկանք... ծխելու ու զովանալու։

Ա. Ն. Ն. ա.—Միևնոյն է, տղամարդիկ այնտեղ էլ հանգիստ կերպով ծխում են, այնպէս որ այս սենեակը դուրս եկաւ բոլորովին աւելորդ։ Գնանք։ Այնտեղ շատ հետաքրքրական է. պարերն էլ շուտով կը սկսեն։ Գնանք, հմ...

Մ. Բ. Բ. ա. յ. է. լ.—Գնանք։ (Երեքն էլ գնում են հիւրասենեակը)։

## ՎԵՅԵՐՈՐԴ ՏԵՍԻՒՆ

(Քիչ յետոյ մտնում են Հեղինէն, Ռուբէնը և Երիտասարդ Պարոնը)

Հ. Ե. Ղ. Ի. Ն. է.—Գուցէ կանանց համար անյարմար է այստեղ մտնելը։

Ե. Բ. Ի. տ. ա. ս. ա. Բ. Գ.—Ես կարծում եմ կարելի է։

Ռ. Ն. Բ. է. Ն.—Ի հարկէ՛ կարելի է։

Հ. Ե. Ղ. Ի. Ն. է.—(Դիտելով սենեակը, ինքն իրան) Ա՛խ, նա այստեղ չէ։ (բարձր) Ո՛չ, պարոններ, ինձ դուր չէ գալիս այստեղ. յետ գնանք։

Ե. Բ. Ի. տ. ա. ս. ա. Բ. Գ.—Ինչպէս կամենաք։ Ես ձեր ստորուկըն եմ։

Հ. Ե. Ղ. Ի. Ն. է.—Ախ, այդ երբեանից։ (ուզում է գնալ)

Ռ. Ն. Բ. է. Ն.—Հեղինէ, ես կը մնամ այստեղ ծխելու։ Շուտով կը վերադառնամ։

Հ. Ե. Ղ. Ի. Ն. է.—Խնդրեմ։

Ե. Բ. Ի. տ. ա. ս. ա. Բ. Գ.—Ես էլ կը ծխէի, եթէ որ դուք չը լինէիք ինձ հետ, օրիորդ։ Բայց ձեզ հետ ես մոռանում եմ ոչ միայն պապիրոսները, այլ և ամեն ինչ... ամբողջ աշխարհը։

Հ. Ե. Ղ. Ի. Ն. է.—Օ՛հ, ճիշտ, ճիշտ։ (Երկուսն էլ գնում են)։

Ռ. Ն. Բ. է. Ն.—(ժիւղ ժամանակ անց ու դարձ է անում սենեակում, ապա նստում է բազկաթոռի վրա՝ և՛ ծխում) Ո՛չ... ոչինչ չի դուրս գալ... վերջացած է... ընդմիջտ վերջացած։ Նոյն իսկ չէ էլ նայում... խուսափում է ինձանից։

## ՇՕԹԵՐՈՐԴ ՏԵՍԻՒՆ

(Շատարով ներս է մտնում Լիւսին։ Այս ու այն կողմն է նայում, ապա մօտենում է նստած Ռուբէնին)

Լ. Ի. Լ. ս. Ի.—(կարճատե լուրջինից յետոյ) Կրկին անգամ բարև ձեզ...

Ռ. Ն. Բ. է. Ն.—Աստուած իմ, այդ դճուք էք։ Կը խելագարւեմ ես։ (ուզում է մօտենալ նրան)

Լ. Ի. Լ. ս. Ի.—Մնացէք այնտեղ, որտեղ կանգնած էք։

Ռ. Ն. Բ. է. Ն.—Լիւսի, իմ Լիւսի։

Լ. Ի. Լ. ս. Ի.—Թողէք ինձ։ Ես իրաւունք չեմ տւել ձեզ այդքան մտերմութեան։

Ռ. Ն. Բ. է. Ն.—Դէ լաւ... ներեցէք...

Լ. Ի. Լ. ս. Ի.—(յուզւելով, բայց չը կամենալով այդ ցոյց տալ) Վերջապէս ես կարողացայ յարմար բոլոր գտնել և աննկատելի դուրս գալ ձեզ հետ խօսելու համար։

Ռ. Ն. Բ. է. Ն.—Դձուք ցանկանում էք խօսել ինձ հետ։ Դուք աշխատում էիք բոլոր օրերն... ինձ համար... Այդ բախտաւորութիւնն է։

Լ. Ի. Լ. ս. Ի.—Թողէք, խնդրեմ։

Ռ. Ն. Բ. է. Ն.—Բայց սրբան օտարութիւն է այդ։

Լ. Ի. Լ. ս. Ի.—Ի՞նչ։

Ռ. Ն. Բ. է. Ն.—Դուք այնպէս խուսափում էիք ինձանից... աշխատում էիք չը հանդիպել ինձ... և, յանկարծ, ինքներդ էք առիթ որոնում ինձ հետ խօսելու համար։

Լ. Ի. Լ. ս. Ի.—Այո, ես ուզում եմ խօսել ձեզ հետ։

Ռ. Ն. Բ. է. Ն.—Ասացէք... ասացէք... ես լսում եմ։

Լ. Ի. Լ. ս. Ի.—(կարճատե լուրջինից յետոյ) Դիտէք, դուք ինձ յիշեցնում էք զողին, մօտենում էք դադանագողի, սողալով։ Ինձ թւում էր, որ այն դէպքից յետոյ, երբ մի քանի օր սրանից առաջ դուք այցելեցիք ինձ... ինձ թւում էր, որ ես այլևս չեմ տեսնիլ



ձեզ: Սակայն ես սխալվել էի: Դուք չէիք դադարում ինձ հետա-  
մուտ լինելուց... Ուր որ ես գնում էի՝ ամեն տեղ էլ սուսերի նման  
յայտնվում էիք դուք: Դուք մի քանի անգամ եկաք ինձ մօտ,  
ընտրելով յատկապէս հէնց այն ժամերը, երբ Աբրամը տանը չէր  
լինում: Ես ձեզ չէի ընդունում: Առհասարակ ես խուսափում էի  
ձեզնից. դուք այդ չէիք կարող չը նկատել: Ձեզ համար պէտք է  
պարզ ու հասկանալի լինէր, որ ես չեմ ցանկանում պատահել  
ձեզ: Սակայն, դուք, չը հայելով և ոչ մի բանի, շարունակում էիք  
հետևել ինձ:

Ռ ու ր է ն.—Կարող էի ես ուրիշ կերպ վարել: Դուք  
կարծում էք այդքան հեշտ կարող է մարդ ինքն իրան ասել. դա-  
դարի, և ապա թողնել ձեզ հանգիստ:

Լ ի ւ ս ի.—Դէ, լաւ: Ինչո՞ւ համար էք այդպէս անում: Ասա-  
ցէք ինչո՞ւ էիք աշխատում տեսնել ինձ հետ: Ի՞նչ նպատակով  
էք հետամուտ լինում ինձ: Դուք լուր էք: Ի՞նչ կարող եմ անել ես:

Ռ ու ր է ն.—Դուք հարցնում էք՝ թէ ինչո՞ւ համար: Ես ինքս  
էլ որոշապէս չը գիտեմ թէ ինչ նպատակով եմ անում: Գիտեմ  
մի բան միայն, որ ինչ որ մի ոյժ մղում է ինձ դէպի ձեզ, իմ  
գիտակցութեան ամեն մի խորշը այս բոլորին լի է ձեզանով...

Լ ի ւ ս ի.—Ես ձեզ չեմ հասկանում:

Ռ ու ր է ն.—Դուք չէք հասկանում: Լիւսի: Թողնե՛ք կօ-  
մեղիս խաղալը: Մի ժամանակ դուք ինձ սիրում էիք... Եւ ահա  
երկուսս էլ—թէ ես և թէ դուք—ուղում ենք խօսել այդ մասին,  
սակայն ոչ մէկը մեզնից չէ վստահանում սկսել: Ինչո՞ւ ակնարկ-  
ներով խօսել:

Լ ի ւ ս ի.—Լաւ, խօսենք ուղղակի: Ես մի ժամանակ սիրում  
էի ձեզ: Ենթադրենք: Յետո՞յ:

Ռ ու ր է ն.—Յետոյ... Յետոյ լսեցէք այն, ինչ որ կա-  
սեմ ձեզ...

Լ ի ւ ս ի.—Ասացէ՛ք:

Ռ ու ր է ն.—Փոխեցէք երեւկայութեամբ մի քանի տա-  
րիներ սրանից առաջ: Միթէ դուք ոչինչ չէք մտաբերում: Ո՞չ:  
Հարցնում եմ ձեզ: Այժմ լուր էք դուք: Յիշում էք դուք այն  
ամառային երեկոն... վերջին երեկոն... որից յետոյ ես պէտք է  
գնայի: Այո: Դուք նստած էիք և կամաց... կամաց լալիս էիք...  
Իսկ ես հանգստացնում էի ձեզ, ասում էի մխիթարական խօս-  
քեր... փաղաքշում էի ձեր մազերը: Յիշում էք ինչպէս բռնեցիք  
դուք իմ գլուխը, կտաքրիք դէպի ձեզ, ամուր սեղմեցիք ձեր

կրծքին ու չէիք բաց թողնում: Եւ այն ժամանակ... ես համբու-  
րեցի ձեզ... երկար, հրաժեշտի համբուրով: Ես կարծես հէնց  
այս բոլորիս լսում եմ ձեր շրթունքների կամաց շշնջիւնը. ջրոնն  
եմ, ես ջրոնն եմ, ընդմիշտ ջրոնն: Յիշում էք դուք այդ երեկոն,  
տիկին Լիւսի:

Լ ի ւ ս ի.—Յիշում եմ... և միշտ էլ յիշում էի: Դա իմ լա-  
ւագոյն յիշողութիւններից մէկն էր: (սթափելով) Այդ խօսքերն էլ  
արտասանել են: Բայց միթէ ես պէտք է մնայի հաւատարիմ  
այդ խօսքերին միայն այն պատճառով, որ նրանք արտասանել են:  
Ես ձեզ չեմ հասկանում:

Ռ ու ր է ն.—Ես չը գիտեմ թէ ինչ պատասխան տամ ձեզ:  
Այս բոլորին ես չեմ տիրապետում ինձ: Պատրաստ եմ ընկնել  
ձեր առաջ, գրկել ձեր ծնկները, աղաղակել, հեկեկալ, արդարու-  
թեան կոչ անել...

Լ ի ւ ս ի.—Այո, այն ժամանակ ես ձեզ սիրում էի, որքան  
որ կարող էի սիրել: Համարեա թէ փոքրիկ աղջիկ էի: Դուք գնացիք:  
Ես մնացի մենակ, ինքս ինձ հետ: Ճիշտ հէնց այդ ժամանակ  
շատ բան սկսեց փոխել ինձանում: Մի առ ժամանակից յե-  
տոյ ես հանդիպեցի Աբրամին: Նա իսկոյն կարողացաւ ըմբռնել  
ինձ, թափանցեց իմ հոգու. ամենախուլ անկիւնների մէջ, կարո-  
ղացաւ ներշնչել ինձ հոգեկան ոյժ: Այդ բոլորի հետեանքը այն  
եղաւ, որ ես սիրեցի նրան ու ամուսնացայ նրա հետ: Ուրեմն էլ  
ի՞նչ էք ուզում ինձանից: Հաւատացնում եմ ձեզ, որ նոյն իսկ  
բանը այն տեղը հասաւ՝ որ ես սկսեցի ամաչել իմ նախկին սիրուց:

Ռ ու ր է ն.—Յանուն ինչի՞:

Լ ի ւ ս ի.—Այո, շատ կարելի է դուք չէք էլ հասկանալ  
յանուն ինչի: Ես չեմ թագցնում, մեծ ջանք հարկաւոր եղաւ իմ  
առաջին սիրուց բաժանելու համար:

Ռ ու ր է ն.—Լիւսի:

Լ ի ւ ս ի.—Բայց այժմ, Ռուբէն, ես շատ հեռու եմ գնա-  
ցել արդէն այն սարսափելի միջավայրից, ուր քիչ մնաց, որ ես  
կորչէի և որտեղ ես հանդիպում էի ձեզ:

Ռ ու ր է ն.—Աստուծո՞ւ իմ, Լիւսի: Այդ ի՞նչ էք ասում:  
Ձէ, դուք այդ չէք ուզում ասել, դուք այդ չէք ասում: Դուք չէք  
կարող և չը պէտք է այդպէս ասէք: Ձէ որ դրանք միայն անպի-  
սեղանաւ խօսքեր են:

Լ ի ւ ս ի.—Լսեցէ՛ք: (քաշում է դէպի պատուհանը և նայում  
դուրսը):



Ռ ու բ է ն.—Ներեցէք, ես չէի ուզում վերադառնալ ձեզ (մօտենում է նրան) իմ գնալուց յետոյ, ես ամբողջ կրեց տարի ապրում էի միայն ձեր մասին ունեցած յիշողութիւններով։ Եւ, յանկարծ, ես իմանում եմ, որ դուք ամուսնացել էք։ Աստուած իմ, ինչ կատարեց ինձ հետ այն ժամանակ։ Այդ մի սարսափելի ժամանակ էր։ Բայց անցաւ էլի մի քանի տարի։ Ես չէի վերադառնում այստեղ, և իմ սէրը, կարծես լռել էր։ Մակայն բաւական եղաւ դալ այստեղ, տեսնել ձեզ... ու նա նորից իր նախկին ոյժով բռնկեց իմ մէջ։ Դուք առաջնանից էլ գեղեցիկ էք, դուք, կարծես, արօպիքական արեւ լինէք, որը այրում է մարդու, ծնեցնում հազարաւոր վերապրումներ։

Լ իւսի.—Այդ դարձուածքը դուք ինձ ասում էիք առաջ էլ... դեռ այն ժամանակ։

Ռ ու բ է ն.—Դուք մտաբերեցիք այդ։ Աստուած իմ... Ձեր հայեացքի մէջ փայլեց ինչ որ մի նախկին բան... վաղուց ծանօթ... Լիւսի։

#### Պատուզում

Լ իւսի.—Կասեմ ճշմարտութիւնը։ Մի քանի օր սրանից առաջ, ձեր գնալուց յետոյ, իմ կրակալուծեան մէջ յարութիւն առաւ ինչ որ մի հին բան, ես յիշեցի թէ ձեզ, թէ իմ մանկութիւնը... Ես կարծես լսում էի ինչ որ արձագանք։ Հոգուս մէջ ինչ որ շարժեց... սակայն դա մի վայրկեան միայն։

Ռ ու բ է ն.—Դուք ասում էք, նախկին զգացմունքների արձագանքը բռնկեց ձեր մէջ։ Ուրեմն դարձրէք նրան աւելի լսելի։ Մօտեցրէք նրան։ Դարձրէք անցեալը՝ ներկայ... Ես կօգնեմ այդ բանում։ Լիւսի։

Լ իւսի.—Ո՛չ, ո՛չ։ Ռուբէն։ Մի խօսէք այդ մասին։ Վաղուց արդէն ես անցել եմ դրա վրայից։ Դուք չէք ուզում հասկանալ, որ ես այն չեմ, որպիսին դուք ինձ ճանաչում էիք։ Իմ նոր կեանքը կերպանափոխեց իսկ։ Ես այլ եմ այն չեմ... այն չեմ։

Ռ ու բ է ն.—Լիւսի։ Ինչպիսի կեղծիքով են հնչում ձեր այդ խօսքերը։ Դուք այդ չէք ուզում ասել, ոչ այդ... Դուք եկէք այդ խտտաբարոյ կեանքից։ Դա այն մթնոլորտը չէ, որտեղ դուք կարող էք ազատ կերպով շունչ քաշել։ Գնանք ինձ հետ, Լիւսի, ես կառաջնորդեմ ձեզ այնտեղ, ուր ուրախութիւն է տիրում։

Լ իւսի.—Ո՛չ, Ինչ էլ որ լինի... անցեալը վերադարձնել ձեզ չի յաջողւի։ Երբէք, երբէք։

Ռ ու բ է ն.—Հասկացէք, Լիւսի։ Ես սիրում եմ ձեզ, ինչպէս հազարաւոր սիրողները միասին։ Անկարելի է, որ դուք էլ ինձ չը սիրէք։ Բնութիւնը այդպիսի հակասութիւններ չէ ընդունում։ Լիւսի, ինչպէս դուք նայում էք ինձ վրա այժմ։ Տէր Աստուած, այս բոլորին դուք նոյնն էք, ինչպէս որ առաջ էիք։ Ահա այժմ դուք նման էք նախկին, փոքրիկ Լիւսիին։ Անուանեցէք ինձ դարձեալ արջի քոթոթ, ինչպէս որ ասում էիք առաջներում։ Ուղիղ չեմ ասում, Լիւսի, դու դարձեալ առաջնան էս, առաջնանը. (բռնում է նրա ձեռքերից, Լիւսին ուզում է աղատել) Ինչքան գեղեցիկ ես դու... ինչպէս սիրում եմ ես քեզ։ (զրկում է նրան)։

Լ իւսի.—Դուք խելագարուել էք։ Թողէք։ Մեզ կարող են տեսնել։

Ռ ու բ է ն.—Լիւսի, իմ Լիւսի։

Լ իւսի.—Դէ, թող, Ռուբէն... Թող։ (ընդդիմադրում է նրան, բայց, յանկարծ, ինքն է նետում նրա գիրկը)։

#### ՌԻԹԵՐՈՐԴ ՏԵՍԻՆ

(Շտապ ներս է մտնում Միքայէլը)

Միքայէլ.— (որը մօտեցել է բաւական մօտիկ, կանգնում է չիմանալով ինչպէս վարել) Ներեցէք... (ուզում է հեռանալ)։

Լ իւսի.—Մնացէք, Միքայէլ։ (Ռուբէնին) Հեռացէք։

Ռ ու բ է ն.—(շփուած գնում է դէպի դուռը, բայց կանգ է առնում Միքայէլի կողքին) Ես վստահ եմ ձեր խոհեմութեան վրա։ (Միքայէլը լսում է Ռուբէնը գնում է, Երկարատե պաուզա)։

Միքայէլ.—Ձեր մօրաքոյրը... մօրաքոյր Աննան... ձեր մասին էր հարցնում... խնդրեց ինձ գտնել ձեզ... ես ենթադրեցի, որ դուք այստեղ էք։ (լսում է)

Լ իւսի.—Դուք... դուք դարձացած էք։ (Միքայէլը լսում է) Ձախմացած էք... վրդովւած...

Միքայէլ.—Ես... չը գիտեմ... Դուք կուգէք որ գնամ...

Լ իւսի.—Ո՛չ, ո՛չ։ Մնացէք, խնդրում եմ ձեզ։

#### Պատուզում



Միքայէլ.—Դուք սիրում էք այդ մարդուն... ներեցէք, ես, կարծեմ, յիմարութիւններ եմ հարցնում:

Լիւսի.—Ոչ, ինչո՞ւ համար: Ես կը պատասխանեմ ձեզ... (մի փոքր լռելուց հետոյ) Ես նրան սիրում էի մի ժամանակ: Իսկ այժմ...

Միքայէլ.—Իսկ այժմ ո՞չ:

Լիւսի.—Այժմ... այժմ... ոչ, չեմ սիրում: Ես տեսնում եմ, դուք ինձ չէք հաւատում: Եկէք մօտիկ, նստեցէք ահա այստեղ: Ես ձեզ կասեմ բոլորը, անկեղծ կերպով կասեմ:

Միքայէլ.—Ո՛չ, ինչ կարիք կայ: Ե՞ս ինչպիսի եմ:

Լիւսի.—Աստուած իմ: Հարկաւոր է դոնէ մէկին ասել, այնքան անտանելի է լռել, այնքան ծանր է: Դուք խելօք էք... զգայուն մարդ էք, ինձ կը հասկանաք: Մի մարդ չը կայ, որին կարողանայի ասել այդ... Աբրամին չեմ կարող... իսկ այս մէկը չի հասկանալ, նա միայն սիրում է խելագարի նման...

Միքայէլ.—Նա ձեզ սիրում է: Դրանում դուք հաւատացած էք:

Լիւսի.—Թոյլ տէք ինձ խօսելու...

Միքայէլ.—Պօսեցէք:

Լիւսի.—Դուք ինձ կհասկանաք (պառլա) Ես ձեզ առաջի, որ նրան չեմ սիրում: Այդ ուղիղ չէ: Ես ինքս էլ չը գիտեմ՝ սիրում եմ նրան թէ ոչ: Բայց եթէ դուք կը հարցնէք՝ սիրում ես արդեօք Աբրամին, ես ի հարկէ չեմ ասի ոչ, բայց չեմ էլ ասի, այո: Նոյնպէս չը գիտեմ: Դա սարսափելի է: Ռուբէնին ես սիրում էի առաջ: Իրարից բաժանւեցինք, յետոյ ես պատահեցի Աբրամին և սիրեցի նրան: Դա մի մըրիկ էր, հզօր, բուռն ձգտում: Բայց յետոյ, երբ մըրիկը հանդարտւեց, երբ ամեն ինչ իր սովորական սահմանների մէջ մտաւ, ես հետզհետէ սկսեցի յաճախ անձնատուր լինել ցնորքների անցեալի մասին: Վերջապէս, ես չը կարողացայ դիմանալ... պատմեցի ամուսնուս իմ նախկին սիրոյ մասին:

Միքայէլ.—Եւ ի՞նչ:

Լիւսի.—Նա շատ հանգիստ վերաբերւեց: Ես էլ հանգստացայ, որովհետեւ ինձ թւում էր, որ իմ անհանգստութիւնը առաջանում է նրանից, որ ես այդ բոլորի մասին չեմ պատմել Աբրամին... Բայց ես սխալեցի: Բացի այդ՝ հոգուս մէջ սկսել էր մտնել մի կասկած... կասկած, որ այլ ես անգօր եմ ուղեկցել

Աբրամին: Վերջ ի վերջոյ, ես նրան լիովին երբեք չեմ հասկացել... ես միայն խոնարհւում էի նրա առաջ: Ես հետեցի նրան, մինչդեռ ես այնպիսի կին չեմ, որպիսինը հարկաւոր է Աբրամին:

Միքայէլ.—Սխալում էք լոպէի ազդեցութեան տակ: Բանը դրանում չէ:

Լիւսի.—Հէնց ընդհակառակը, դրանումն է: Իսկապէս ասած, ես ամենասովորական կանանցից մէկն եմ, բուրժուական ցանկութիւններով:

Միքայէլ.—Դէ, թողէք: Ինչո՞ւ համար է այդ ինքնահարեածումը:

Լիւսի.—Ո՛չ, ոչ: Ես գիտեմ, դուք ինչ որ պատճառով ինձ իղէալացնում էք: Բայց, ճշմարիտ, ես մի շատ հասարակ կին եմ, ամենամիջակ մարդը: Որովհետեւ ես արտասանում եմ մեծ-մեծ խօսքեր, պրօֆատով վերցրած մտքեր եմ արտայայտում, դրանից միթէ ես...

Միքայէլ.—Տիկին Լիւսի, ինչո՞ւ էք այդքան ստուրացնում ձեզ: Չէ՞ որ այդ ճշմարիտ չէ:

Լիւսի.—Ճշմարիտ է. բոլորը ճշմարիտ է. Եւ այժմ, երբ ես տեսայ այդ միջակ մարդուն, և իմ մէջ էլ դարձանց իմ նախկին եսը: Ես բռնում եմ ինձանից Ռուբէնին, ինչդուր եմ նրան հանգիստ թողնել ինձ, բայց ինքս ինձ չեմ հաւատում: Աբրամի առաջ ես խոնարհւում եմ, ես սիրում եմ նրան, բայց դա կարծես այն բոլորը չէ, ինչ հարկաւոր է ինձ: Ամեն ինչ իմ հոգու խորքում տակն ու վրա է եղել... Ես, կարծես, մի սարսափելի երազ եմ տեսնում... Չը գիտեմ, հասկանում էք դուք ինձ...

#### Պատգա

Միքայէլ.—Այո... սկսում եմ հասկանալ...

Լիւսի.—Յօգնել եմ ես... ինչպէս կը ցանկանայի հանգստանալ: Ծիծաղելի չէ, միթէ—եւ արդէն հանգստանալու մասին եմ մտածում: (լռութիւն) Դէ, այժմ դուք գիտէք այն, ինչ որ բացի ինձանից չը գիտէր ոչ ոք: Ուրեմն օգնեցէք ինձ: Ի՞նչ պէտք է անեմ ես:

Միքայէլ.—Այդ ամենը այնքան անպատասխան էր...

Լիւսի.—Ես դեռ եւս չեմ կորցրել յոյսս: Դեռ էլ կը փորձեմ, ես կը փորձեմ:



## ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԻՍ

(Ներս է մտնում Աբրամը)

Աբրամ.—Ա՛, դուք այստեղ էք: Ներիր ինձ, Լիւսի, բայց այստեղ ձանձրոյթից կարելի է մեռնել: Ա՛խ, իմ կարիքները: Լիւսի.—Արդէն ձանձրացա՛ր:

Աբրամ.—(Կռքահալով կարօտով) Այո՛:

Լիւսի.—Մենք կը գնանք շուտով: Միկնոյնն է, այսօր դու ալ ևս չես պարապելու:

Աբրամ.—Էլ արտեղ: Ի հարկէ ոչ: (անց ու դարձ է անում «ննահողում») Մարտափելի ձանձրալի է: Լսիր, Միքայէլ, փոխադրու՛ւր մեզ մօտ ապրելու: Դու մեզ ամենեւին չես ձնշի, աղնիւ խօսք:

Լիւսի.—Ուղիղ է ասում, տեղափոխեցէք:

Միքայէլ.—Ա՛յ մարդիկ, հօ չէ կարելի համարիս ամեն օր խօսել այդ մասին:

Լիւսի.—Է, ձեզանից ի՞նչ է գնում: Ես մի օր կը դամ ձեզ մօտ և ոյժով կը բերեմ մեր տուն:

Միքայէլ.—Չէ, լո՛ւրջ, դա անյարմարութիւններ կը ստեղծի ձեզ համար...

Լիւսի.—Այդ արդէն մեր գործն է:

Աբրամ.—Դու յիմարութիւններ ես ասում, Միքայէլ: Ամօթ չէ, ա՛յ, տեսնում ես, ինչպէս մենք երկուսով էլ խնդրում ենք քեզ:

Միքայէլ.—Թանգագին բարեկամներս: Դուք, արդա՛րեւ, այնպէս խնդրում էք ինձ, որ ես, հաւանօրէն, կը համաձայնեմ:

Աբրամ.—Եւ հիանալի կը լինի: չէնց էզուց և եթ:

Լիւսի.—Որքան շուտ, այնքան լաւ:

## ՏԱՍԵՐՈՐԴ ՏԵՍԻՍ

(Ներս են մտնում Հեղինէն և երիտասարդ պարոնը)

Հեղինէ.—(կամայ) Նայեցէք: Ես ախր ասում էի ձեզ: Նա շարունակ այս տիկնոջ հետ է:

Երիտասարդը.—Մեր ինչ գործն է: Ինչպէս կարող էք մտածել դուք ուրիշ տղամարդկանց մասին, երբ ես ձեզ հետ եմ:

Հեղինէ.—Ախ, ինչ ձանձրալին էք: Թողէք ինձ:

Երիտասարդը.—Օրիորդ Հեղինէ:

Հեղինէ.—Ճշմարիտ եմ ասում, Թողէք ինձ, խնդրում եմ:

Երիտասարդը.—Ինչպէս կամենաք: Ցտեսութիւն: Ցանկանում եմ ձեզ հաճելի ժամանց այս պարոնի հետ (նեղացած հեռանում է):

Հեղինէ.—Պարոն պրօֆեսօր:

Միքայէլ.—(կամայ) Դարձեալ նա: (Հեղինէին) Այս րո՛պէս:

Լիւսի.—(Միքայէլին) Նա, կարծեմ, ձեզ բաւականաչափ ձանձրացրել է:

Միքայէլ.—Հա՛: (գնում է դէպի Հեղինէն) Պատրաստ եմ ծառայելու:

Հեղինէ.—Գնանք այստեղից:

Միքայէլ.—(յուսահատած) Գնանք:

Հեղինէ.—(գնալու միջոցին) Այ, տեսնում էք, դուք դարձեալ... նրա հետ էք, մինչդեռ ասում էիք, որ դուռւած չէք նրանով (երկուսն էլ գնում են):

Աբրամ.—Ի՞նչ է պատահել քեզ, Լիւսի: Դու այնտեղ այնպէս ուրախ էիր, իսկ այժմ կարծես մոռցւած ես: Ի՞նչ է պատահել:

Լիւսի.—(երկար նայում է նրա աչքերին) Իմ սիրելի: (բռնում է Աբրամի ձեռքը) Իմ սիրելի...

Աբրամ.—Դու դողում ես, Լիւսի: Հիւանդ ես:

Լիւսի.—Կարծես... մի քիչ: Ես քեզ սիրում եմ, սաստիկ սիրում եմ... Հաւատում ես դու այդ բանին:

Աբրամ.—Ինչպիսի ծիծաղաշարժ հարցեր ես տալիս: Ի հարկէ՛ հաւատում եմ:

Լիւսի.—Դու էլ ինձ սիրում ես, ես գիտեմ, սաստիկ սիրում ես, աւելի քան ես քեզ:

Աբրամ.—Բայց դու սաստիկ դողում ես: Ի՞նչ է պատահել քեզ:

Լիւսի.—Ես վախենում եմ... ինչ որ բանից վախենում եմ: Ինքս էլ չը գիտեմ ինչից, բայց վախենում եմ:

Աբրամ.—Այո՛: Դու էլ:



Լ Ի ւ ս Ի.—Իսկ միթէ դու էլ ես վախենում:

Ա Բ ր ա մ.—Այո, երբեմն:

Լ Ի ւ ս Ի.—Ի՞նչ բանից:

Ա Բ ր ա մ.—Երբեմն ես վախ եմ զգում քեզ համար:

Լ Ի ւ ս Ի.—Ո՛չ: Ի՞նչ: Դու չը պէտք է վախենաս: Ես նոյնպէս, քեզ մօտ կանգնած, ես հանգիստ եմ: Դու կը պաշտպանես ինձ. ես գիտեմ:

Ա Բ ր ա մ.—Ի՞նչ բանից:

Լ Ի ւ ս Ի.—Ինձ երբեմն թւում է, որ ինչ որ մի սե բան շարժւում է գէպի ինձ, և ես ուզում եմ փախչել: Բայց չէ՞ որ ես քեզ հետ եմ, փախչելու կարիք չըկայ: (Հիւրասենեակից լսում է երաժշտութեան ձայն: Նւագում են վալս):

Ա Բ ր ա մ.—Ոչինչ, մի վախեցիր, Լիւսի, ոչ մի բանից: Քեզ հետ միասին մենք դեռ երկար պիտի դնանք, բայց երբէք վայր չենք դնի զէնքերը:

Լ Ի ւ ս Ի.—Այո, ծշմարիտ չէ միթէ:

Ա Բ ր ա մ.—Փիտեա, Լիւսի, մարդուս կեանքը ես երեւակայում եմ իբրեւ մի ստեղծագործութիւն, իբրեւ մի անընդհատ, անդուլ կառուցում: Մարդը կառուցանում է մի մեծ շինութիւն, մի ամբողջ, տաճար—ինչպէս ուզում ես անանիւր,—և ամենայն մէկը պիտի ձգտէ, որ իր ստեղծածը լինի ամենից հոյակապը, ամենից վեհը: Ես նոյնպէս: Լիւսի, ձգտում եմ, որ իմ ամբողջ լինի այնպիսինը, որի նմանը չը կայ ուրիշ տեղ: Իմ ամբողջը ես կառուցանում եմ իմ հոգու և իմ ըմբռնողութեան բոլոր թելերով: Ես չունեմ կատարելագործւած գործիքներ, որոնցով ես կարող լինեմ շինել այն: Իմ ճանապարհը մութ է ու դժւար: Եւ դու, Լիւսի... դու այն ուղեցոյց ճառագայթն ես, որը ղեկավարում է ինձ: Դու իմ մուսան ես, իմ աստուածուհին, որ երկնքից իջել ես, որպէս զի կախարդական ջահով լուսաւորես իմ խաւար ուղին: Քո հոգու մէջն է իմ աշխատանքի սկիզբն էլ, վախճանն էլ: Եւ եթէ այդ ուղեցոյց լոյսը կը հանգչի, եթէ իմ աստուածուհին կը թռչի ինձանից ու այլեւ չի լուսաւորի իմ ճանապարհը,—այն ժամանակ կը փլի նաև իմ չաւարտւած ամբողջը: Լիւսի, թող օրհնի քեզ այն Աստուծը, որի համար մենք կառուցանում ենք մեր ամբողջը: Միայն չը յօգնես, միայն չը յօգնես, Լիւսի: Մենք նորանոր քարեր կը կրենք մեր ամբողջը շինելու համար: Մենք ամբողջ ժայռեր կը պղկենք իրանց տեղերից և նրանցից սլանքեր կը տաշենք ամբողջի համար:

Լ Ի ւ ս Ի.—Աբրամ: Գնանք, գնանք տուն: Ես յանկարծ, այնպէս ցանկացայ գնալ այստեղից: Այստեղ այնքան ատելի է ինձ համար:

Ա Բ ր ա մ.—Որքան ուրախ եմ ես, Լիւսի: Դու ցանկութիւն զգացիր տուն գնալու:

Լ Ի ւ ս Ի.—Ես երբէք այլևս չեմ յաճախի մօրաքոյր Աննայի երեկոյթները:

Ա Բ ր ա մ.—Ծշմարիտ է, արդեօք, Լիւսի: Որքան լաւ է: Քեզ ատելի են այդ մարդիկ: Եւ ի՞նչպէս կարող է լինել ուրիշ կերպ: Ի հարկէ: Ձէ՞ որ դու իմ Լիւսին ես, ես քեզ լաւ եմ ճանաչում: Դէ գնանք այստեղից:

Լ Ի ւ ս Ի.—Գնանք: Մենք կը վառենք մեր գրանիթեայ լամպը, և այդ լոյսի առիւծ կը լինենք միասին՝ դու և ես:

Ա Բ ր ա մ.—Ինչ զարմանալի ես դու այսօր, իմ չքնաղ Լիւսի:

Լ Ի ւ ս Ի.—Դէ գնանք: (Երկուսն էլ գնում են):

#### ՏԱՍՆԵՆԻՄԷԿԵՐՈՐԴ ՏԵՍԻՆ

(Ներս են մտնում աստիճանաւոր և մի հիւր)

Ա ս տ Ի ճ ա ն ա լ ո Ր.—Քեզ դձեր է գալիս այս տիկինը Հ Ի ւ ր Ր.—Լսում ես, ինչ թունդ են պարում: Իսկ տիկինը ոչինչ լաւ է: (Երկուսն էլ նայում են Լիւսիի ետեից)

Ա ս տ Ի ճ ա ն ա լ ո Ր.—Իսկ չը գիտեմ, շուտով կը տան ընթերիքը:

Հ Ի ւ ր.—Պէտք է որ շուտով: (Հիւրասենեակից, վալս պարելով սլանում է մի զոյգ՝ օրիորդ և մի ուսանող):

Ա ս տ Ի ճ ա ն ա լ ո Ր.—Ոչ, ընթերիքը, ինչպէս երևում է, դեռ ես շուտ չեմ տալու: Ես էլ պարել ուղեցի: Գնամ, ես էլ մի օրիորդ գտնեմ:

(Գնում է: Յայտնում է մի ուրիշ նոր զոյգ և պտտում սենեակում: Մըտնում է էլի մի հիւր):

Ե ր կ ր ո Ր դ հ Ի ւ Ր.—(առաջինին) Փիտէք, ի՞նչ նորութիւն կայ:

Ա ո ա ջ Ի ն Ր.—Ոչ:

Ե ր կ ր ո Ր դ Ր.—Երեւակայեցէք: Առևտրական բանկի ակցիաները... (Պարզների ոտքերի ձայները խլացնում են նրա խօսքերը):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



## ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Աստժին գործողութեան կահաւորութիւնը: Պարզ, արեօր է: Գործնան վերջն է:  
Այս և նախքան գործողութիւններէ միջև անցել է մօտ երկու շաբաթ:

### ԱՌԱՋԻՆ ՏԵՍԻՆ

(Արբամը նստած կարինետում պարապելում է: Լիւսին հիւրասենեակում է: Նա գանդաղ քայլում է անկիւնից անկիւն):

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Այդ դժու ես այնտեղ, Լիւսին:

Լ. Բ. Ե. Բ. — Ես եմ:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Ի՞նչ ես անում այդտեղ: Չես լսում դու, Լիւսին: Ես քեզ հետ եմ խօսում:

Լ. Բ. Ե. Բ. — (բարկութեամբ) Ի՞նչ ես ուզում ինձանից:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — (վեր է կենում և անցնում հիւրասենեակը) Էլ ինչո՞ւ համար ես բարկանում. Ես քեզ հետ խօսում եմ խաղաղ կերպով, իսկ դու...

Լ. Բ. Ե. Բ. — Ես չեմ բարկանում: Ուղղակի տրամադրութիւնս վատ է:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Այո, բայց այդ գէպքում... վերջին ժամանակներս, դու շարունակ տրամադրութիւն չունես:

Լ. Բ. Ե. Բ. — Դարձեալ խօսեցիր դու դրա մասին: Իսկ չեմ հասկանում դա քեզ երեւի բաւականութիւն է պատճառում...

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Դէ լաւ, ես կը լռեմ:

### Պատուզում

Լ. Բ. Ե. Բ. — Ի՞նչ էիր կամենում ինձ ասել:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Ա՛հ, հա: Լսիր. հէնց նոր ես ստացայ մի տարօրինակ հեռագիր: (հանում է գրպանից) Քաղաքային է և անստորագիր. ընդամենը երկու խօսք. «անպատճառ կը գամ»: Ես մտածեցի՝ քեզ չէ ուղղւած նա:

Լ. Բ. Ե. Բ. — Ինչո՞ւ ես կարծում, որ նա ինձ է ուղղւած:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Որովհետեւ այս հեռագիրը յամենայն դէպս ինձ չէ ուղղւած:

Լ. Բ. Ե. Բ. — (վերցնում է հեռագիրը) Այո, ինձ է:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — (լռութիւնից յետոյ) Երեւի Ռուբէնիցն է:

Լ. Բ. Ե. Բ. — Հաւատացած ես:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Անպայման:

Լ. Բ. Ե. Բ. — Ինչո՞ւ:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Որովհետեւ դու ոչ ոք չունես, ուստի կարողանայիր սպասել այդ տեսակ մի հեռագիր: Վերջին ժամանակներս, այդ պարոնը լինում է քեզ մօտ շատ յաճախ, հօ ինձ մօտ չէ գալիս նա: Դու նրան ընդունում ես սիրով: Ուղղակի մտերմացել ես նրա հետ: Էլ ի՞նչ կայ զարմանալու, եթէ դուք սկսել էք հաղորդակցել իրար հետ հեռագիրներով:

Լ. Բ. Ե. Բ. — Բայց ինչպիսի եղանակով ես դու ասում այդ բոլորը. ուղղակի զարմանալի է: «Այդ պարոնը», «մտերմացել է»: Չը լինի սկսել ես խօսողութիւն արդէն:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Ինչպիսի յիմարութիւններ ես ասում, Լիւսին: Աւելի լուրջ պատճառներ կան: Յամենայն դէպս, ինչ էլ որ լինի, ես քեզ շատ խնդրում եմ... Աշխատիր, որ նա չը գայ մեզ մօտ:

Լ. Բ. Ե. Բ. — Այդ ինչո՞ւ:

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Ես շատ լաւ հասկանում եմ, որ դուք մանկութեան ընկերներ էք, մեծացել էք միասին, այն ժամանակ մտերիմ էք եղել: Բայց բանը նրանումն է, որ ես այսօր իմացայ մի նորութիւն, որը սկզբում նոյն իսկ ապշեցրեց ինձ: Բանից դուրս է գալիս, որ Ռուբէնը հէնց այն միևնոյն պարոնն է, որը դրում էր իմ դէմ յօգւածներ, Ursus ծածկանունով: Համաձայնիր, որ մենք այլևս չենք կարող նրան ընդունել մեզ մօտ:

Լ. Բ. Ե. Բ. — Մէնք. — Դու՛, այո: Բայց ես... իմ ի՞նչ գործն է: Նա իմ բարեկամն է: Չես հրամայի ինձ արդեօք մոռանալ ամբողջ աշխարհը, ի սէր...

Ա. Բ. Բ. Ե. Բ. — Լիւսին:

Լ. Բ. Ե. Բ. — Եւ վերջապէս, ես վաղուց գիտեմ, որ Ursus-ը և Ռուբէնը միևնոյն անձնաւորութիւնն է:



Ա. Բ. Բ. Կ. Կ. — Դու այդ գիտէիր և, այնուամենայնիւ, շա-  
րունակում էիր... Հրաժարում եմ հասկանալ քեզ:

Լ. Ի. Լ. Կ. — Եւ յետոյ դու տեսնում ես արդէն, որ նա այլ  
ևս չէ գրում քո դէմ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Միևնոյն չէ արդեօք՝ այս րոպէիս նա գրում է,  
թէ ոչ:

Լ. Ի. Լ. Կ. — Քեզ համար այդ միևնոյն է, ի հաշիւէ դուք  
մնում էք թշնամիներ: Իսկ ես... ես ընդունելու եմ նրան առաջ-  
ւայ նման...

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Բայց դիտեա՛ դու, վերջապէս՝ թէ ինչեր են  
սկսում խօսել այդ մասին հասարակութեան մէջ:

Լ. Ի. Լ. Կ. — Այդ ռո՛ ժամանակից ես դու սկսել նշանակու-  
թիւն տալ հասարակական կարծիքին: Մինչև այժմ, դու ամեն  
քայլափոխում արհամարհում էիր այն, և դրանով էլ այն տեղը  
հասցրիր, որ մենք այժմ նոյն իսկ ծանօթներ համարեա թէ չունենք:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ես այժմ էլ միևնոյն չափով արհամարհում  
եմ հասարակական կարծիքը այնքան, որքան որ այդ վերաբե-  
րում է ինձ: Բայց ես ոչ ոքի թոյլ չեմ տալ քեզ վերաւորելու:  
Բարեբախտաբար իմ ներկայութեամբ դեռ ես ոչ ոք չէ համար-  
ձակել որևէ բան ասել: Դու, ի հարկէ, իմանում ես, որ երէկ  
առաւօտեան Ռուբէնը ապտակ է տակ մի պարոնի այն պատճա-  
ռով, որ նա քո մասին ինչ որ վերաւորական բան է ասել: Հա-  
մաձայնելի, որ փոքր ինչ տաքօրինակ է, երբ այդ պարոնը յանձն  
է առնում պաշտպանել քեզ... և այն էլ այդ կերպ պաշտպանել:  
Բայց դա դեռ մի կողմ: Դու գիտես, որ ես առանց այն էլ ներ-  
կայումս ենթարկւում եմ իմ թշնամիների կատաղի յարձակում-  
ներին, և այդ դէպքն էլ նրանք կարողացան շահագործել իրանց  
համար: «Լոյսը» հիացած է իր աշխատակցի հերոսական վար-  
մունքից: «Միտքը», ընդհակառակը, յերկրել է դրանից մի սոոր  
բամբասանք և լցրել երկու սիւնակներ: Ճշմարիտ է, ոչ քո  
անունը և ոչ էլ իմը յիշատած չեն այնտեղ, բայց այնպէս է գրւած,  
որ ցերեկայ նման պարզ է՝ թէ ում մասին է խօսքը: Դու այդ  
ամենը չե՞ս կարդացել: Կարգն ուրեմն (գնում է կաբինետ և, լրա-  
դիրները վերցնելով՝ վերադառնում) Կարգն: (ձգում է լրագիրները սեղա-  
նի վրա) և, հասկանում ես, ես անգոր իմ նրանց դէմ... Այդ բո-  
լորը նրանք կաղմակերպել են այնքան ճարպիկօրէն, որ ես չեմ  
կարող ոչ մի բան անել դրա դէմ: Եւ ես դիմեցի ամենայարմար,  
ինձ համար քննադատ միակ գործողութեան... ես մենամար-

տի կանչեցի «Մտքը» խմբագրին: Սպասում եմ պատասխանի:

Լ. Ի. Լ. Կ. — Դու նրան մենամարտի՞ կանչեցիր... բայց դա՛  
դա հօ խելագարութիւն է: Այդ չի լինի:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ոչ, այդ կը լինի, Լիւսի: Ի հարկէ, եթէ մի-  
այն նա չը հրաժարւի:

Լ. Ի. Լ. Կ. — Արբամ: Ես պահանջում եմ, ագնիւ խօսք տուր  
ինձ, որ մենամարտը չի կայանայ:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ինչ ծիծաղելի ես դու, Լիւսի: Քայլը արւած  
է: Նա արդէն ստացել է իմ նամակը: Թողնենք:

Լ. Ի. Լ. Կ. — Արբամ...

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Թողնենք, Լիւսի: Խնդրում եմ, մենամարտի  
մասին այլ ես ոչ մի խօսք: Այդ մասին ես չեմ կարող խօսել:  
Դա միակ ելքն էր, միակ քայլը, հետևապէս, ինչ հարկ կայ խօ-  
սելու: Ես միայն ցաւում եմ, որ քեզ ասացի այդ բանի մասին:  
Վերադառնանք աւելի լաւ է առաջին հարցին, Ռուբէնի մասին:

Լ. Ի. Լ. Կ. — Ռուբէնի վերաբերմամբ ես արդէն ասացի, ինչ  
հարկն էր...

#### Պատուա

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Է՛, եթէ նրա մտերմութիւնը քեզ համար այդ-  
քան թանկ է, ուրիմն ես այլ ևս անկարող եմ որևէ բան անել:  
Ես այլ ևս և ոչ մի խօսք չեմ ասի այդ մասին: (գնում է դէպի կա-  
բինետը, բայց կանգնում է) Մենամարտը երևի կը կայանայ էգուց  
առաւօտեան: Դուցէ այսօր իմ վերջին օրն է: Եւ այդ օրը դու  
չը կարողացար զարդարել ինձ համար: Աստուծ քեզ հետ: (գնում  
է կաբինետը):

Լ. Ի. Լ. Կ. — Արբամ: Սպասիր: (նոյնպէս անցնում է կաբինետը):

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ի՞նչ ես ասում:

Լ. Ի. Լ. Կ. — Արբամ, ես վերաւորեցի քեզ, այո՛, Դու բար-  
կացած ես ինձ վրա:

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Լիւսի: Նստի՛ր այստեղ: Այ այդպէս: Խօսենք  
աւելի հանգիստ կերպով: Դիտես... «բարկանալ» խօսքը շատ  
չնչին է՝ որոշելու համար այն, ինչ որ ես զգում եմ: Ոչ, ես չեմ  
բարկանում... Բայց... բայց եթէ դու իմանայիր, Լիւսի, ինչ է  
կատարւում ահա այստեղ, կրծքիս տակ... Ախ, եթէ դու իմանայիր:

Լ. Ի. Լ. Կ. — Ների՛ր ինձ: Ես գիտեմ... սաստիկ վերաւորե-  
ցի քեզ:



Ա. Բ. Բ. Կ. Կ. — Եթէ դու իմանայիր՝ թէ ինչ է կատարուում հողուս խորքում... Օրէցօր ես աւելի ու աւելի եմ մտնում մինակ։ Բարեկամներ ես շատ քիչ ունեմ, այն էլ ինձ լաւ չեն հասկանում... Միայն երկու իսկական բարեկամներ ունեմ ես — դու և Միքայէլը... Ես աշխատում եմ, աշխատում եմ անդադար, աներևակայելի կոխ եմ մղում։ Ինձ վրա յարձակում են ամեն կողմից, և ես կուռում եմ, անդադար կուռում եմ... Չորս կողմից ես շրջապատւած եմ թշնամիներով... կատաղի թշնամիներով։ Այժմ կոխը իր գազաթնակէտին է հասել, նրանից դէնը այլ ևս տեղ չը կայ... և ես կուռում եմ, մի քաղէ անգամ վայր չեմ դնում գէնքս, դեռ ոչ մի անգամ մինչև այժմ իմ ձեռքը չէ դողացել։ Մինչև ամենավերջին ժամանակը ես վստահ էի ինձ վրա։ Բայց այժմ իմ հաւատը խախտւեց...

Լ. Ի. Լ. Կ. — Խախտւեց... քո հաւատը։

Ա. Բ. Բ. Կ. — Այո։ Եւ գիտե՞ս ինչու։ Դու էիր, որ ինձ յայտ էիր տալիս, դու էիր, որի մօտ ես հանգստանում էի... իսկ այժմ մեր տարածայնութիւնները այնպիսի կերպարանք են ստանում, որ ինձ սկսում է լուրջ կերպով տանջել...

Լ. Ի. Լ. Կ. — Ի՞նչպէս կարող ես դու այդպիսի բաներ ասել։ Դու երբէք չը պէտք է այդպէս ասես։ Տատանւե՛ր։ Ո՛չ, այդ խօսքը քեզ համար չէ։

Ա. Բ. Բ. Կ. — Դու զարմանում ես, մինչդեռ դա այդպէս է։ Այ, թէկուզ հէնց երէկ։ Ես եկայ տուն և չը տեսայ քեզ մինչև երեկոյ... դու, կարծես, խուսափում էիր ինձ հետ խօսելուց։ Եւ ահա ես նստեցի հէնց այս բազկաթոռի վրա, և յանկարծ այնպէս սկսեցի տխրել։ Երէկ ես առաջին անգամ լաց եղայ։

Լ. Ի. Լ. Կ. — Արբան, մի ասա, մի ասա այդպէս...

Ա. Բ. Բ. Կ. — Ի՞նչ է այդ, Լիւսիւ — Քո աչքերին արտասուք եմ տեսնում... Լալի՞ս ես դու։ Այդ լաւ է, մի քիչ լաց եղիր։ Այդ արտասուքները կը ոռոգեն իմ հոգին կենդանաւոր հիւթերով։

#### Պատգա

Լ. Ի. Լ. Կ. — Խօսիր, էլի խօսիր։

Ա. Բ. Բ. Կ. — Ի՞նչ ասեմ։

Լ. Ի. Լ. Կ. — Շարունակիր... էլի խօսիր...

Ա. Բ. Բ. Կ. — Շարունակելու ոչինչ չունեմ։ Ես միայն ուղտի եմ մի բան խնդրել քեզնից։ Մի խլիր ինձնից իմ յոյսը,

իմ ոյժը։ Եթէ քեզ համար թանգ է իմ գործը, մի ոչնչացրու այն, ինչ որ ես ստեղծում եմ։ Դու դեռ լալի՞ս ես։ Քո արտասուքները... Ո՛ր, որքան թանգ են նրանք ինձ համար...

#### Երկարատեւ պառլա

Լ. Ի. Լ. Կ. — Արբան։

Ա. Բ. Բ. Կ. — Ես քեզ լսում եմ... Դէ՛...

Լ. Ի. Լ. Կ. — Այսօր Ռուբէնը կը լինի ինձ մօտ վերջին անգամ։

Ա. Բ. Բ. Կ. — (Երկար նայում է նրան, ապա բռնում է նրա ձեռքը և ամուր սեղմում) Շնորհակալ եմ անգինս։ (մի փոքր լռութիւնից յետոյ) Դու այսօր ասացիր, որ ես խանդոտում եմ։ Այդ բանը ես իմ մէջ չեմ նկատել, իսկ աւելի ևս չէի ուզում նկատել, բայց շատ կարելի է, որ այստեղ որոշ դեր էր կատարում և խանդը։ Բայց գլխաւորը այդ չէ, այստեղ աւելի բարդ...

Լ. Ի. Լ. Կ. — Աւելի լաւ է թողնենք։ Այլ ևս չը խօսենք դրա մասին,

Ա. Բ. Բ. Կ. — Որքան այժմ լաւ է ու պայծառ իմ հոգու մէջ... Հնա... այ թէ ինչ էի ուզում հարցնել... ես ուզում էի... մի հարց տալ։

Լ. Ի. Լ. Կ. — Ի՞նչ հարց։

Ա. Բ. Բ. Կ. — Յիշում ես... դու մի անգամ ինձ պատմեցիր, որ վաղուց, առաջ, երբ... դեռ ևս ինձ չէիր էլ ճանաչում...

Լ. Ի. Լ. Կ. — Հնա...

Ա. Բ. Բ. Կ. — Դու ասում էիր... որ գրաււած էիր մէկով։ Ասա ինձ... Ո՞վ էր նա։

Լ. Ի. Լ. Կ. — Ախ, միթէ այդ միևնոյն չէ։

Ա. Բ. Բ. Կ. — Այո, ի հարկէ... բայց և այնպէս... Ռուբէնը չէր նա... այո։

Լ. Ի. Լ. Կ. — Ռուբէնը... Ո՛չ, ոչ... նա չէր։

Ա. Բ. Բ. Կ. — Դէ ի հարկէ։ Ես հէնց այնպէս հարցրի։ Դժւար է ենթադրել որ դու կարող էիր գրաււել նրանով, նոյն իսկ... թէկուզ հէնց այն ժամանակ։ (Բեմի հետեւում լսում է զանգի ձայն)։ Ո՞վ կարող է լինել։ (զնում է խորքը, բաց անում խորքի դուռը և նայում) Միքայէլն է։

Լ. Ի. Լ. Կ. — Ինչպէ՞ս է պատահել, ես չեմ հասկանում։

Ա. Բ. Բ. Կ. — Ես էլ չեմ հասկանում։



(Ներսէս ժամնում Միքայէլը)

Միքայէլ.—Բարի օր։ Այդ ի՞նչ չէք հասկանում։

Աբրահամ.—Իս հաւատացած էի, որ դու դեռ քնած ես։

Միքայէլ.—Քնած եմ, Կէսօր է արդէն։

Աբրահամ.—Ես ենթադրում էի, որ դիշերը պարապել ես, և այժմ քնած ես։

Լիւսի.—Ես էլ էի այդպէս կարծում։ Նոյն իսկ աշխատում էի աղմուկ չը հանել ձեր սենեակի մօտից անցնելիս։

Միքայէլ.—Ընդհակառակը։ Այսօր ես վեր եմ կացել շատ վաղ։ Մի քիչ պարապելի, իսկ յետոյ դուրս եկայ զբօսնելու։ Դուք դեռ քնած էիք։ Այն օրւանից, երբ տեղափոխեցի ձեզ մօտ, ես կարծեաւ... Հա, ի միջի այլոց, Աբրահամ, քեզ ասելու բան ունեւ։ Յոյս ունեւ ներող կը լինէք, տիկին, եթէ Աբրահամին առանձին ատելու լինեմ։ Գնանք այնտեղ, Աբրահամ։

Աբրահամ.—(զարմացած) Ի՞նչ կայ։ (Միքայէլը և Աբրահամը անցնում են հիւրասենեակ)։

Միքայէլ.—Խնդիրը շատ լուրջ է։ Այս բոլորին ես իմացայ փողոցում, որ «Կեանքի» վերջին երկու համարները գրաււած են։

Աբրահամ.—Անկարելի բան է։

Միքայէլ.—Հաւատացնում եմ քեզ։ Բացի դրանից, ինչպէս խօսում են, արգելել են լրագրի հրատարակելը։

Աբրահամ.—Ի՞նչ ես խօսում։ Քեզ ո՞վ ասաց։

Միքայէլ.—Ամենքն էլ ասում են։

Աբրահամ.—Ես այս բոլորին կը գնամ... կը տեղեկանամ ինչու է բանը։

Միքայէլ.—Այո, գնա։

Աբրահամ.—Այո, այո։ Բայց մի բան. չեմ հասկանում ինչո՞ւ դու ուզեցիր ծածկել այդ բանը Լիւսիից։

Միքայէլ.—(ծիծաղելով) Զնամբիտն ասած, ինքս էլ չը գիտեմ։

Աբրահամ.—Մազալու մարդ ես։ (շտապ անցնում է կարէնեռը) Լիւսի, ես պէտք է գնամ։ «Կեանք» արգելւած է։

Լիւսի.—Արգելւած է։

Աբրահամ.—Այո։ Ես այս բոլորին կիմանամ։

Լիւսի.—Դէ պատմիր կարգին, ինչո՞ւն է բանը։

Աբրահամ.—Ես ինքս էլ դեռ հաստատ բան չը գիտեմ։ Միքայէլը փողոցում լսել է։ Պէտք է շտապել այնտեղ։ Հա... ինչ էի ուզում ասել քեզ։ Ես որքան կարելի է շուտով... կը վերջացնեմ գործերս... և կը վերադառնամ, որպէս զի քեզ հետ լինեմ։ Ես այժմ պահասարակ աւելի շատ կը լինեմ տանը։

Լիւսի.—Ինչո՞ւ։

Աբրահամ.—Գիտես... ինչ... ինչ այնպէս է թւում, որ ես քեզ շատ քիչ ժամանակ եմ նւիրում... Ես չափից դուրս արդէն տարւած եմ իմ գործերով։ Այո, այժմ ես յաճախակի կը լինեմ տանը։

Լիւսի.—Ինչ տարօրինակ բաներ ես ասում դու։ Միթէ քո աշխատանքը չը պէտք է ինչ էլ ոգևորէ։

Աբրահամ.—Այո... բայց և այնպէս... Նո՛ւ, այդ մասին յետոյ։ Այժմ պէտք է գնալ։ Ցտեսութիւն։ (համբուրում է կնոջ գլուխը) Իմ սիրելի Լիւսի (գնում է)։

(Այդ խօսակցութեան միջոցին Միքայէլը, որ մնացել էր հիւրասենեակում, վերցնում է լրագիրը և կարդում։ Աբրահամի գնալուց յետոյ, Լիւսին անցնում է հիւրասենեակը։ Մի առ ժամանակ երկուսով էլ լուռ են։ Լիւսին դանդաղ քայլերով անց ու դարձ է անում սենեակում։ Լուռ թիւն)։

Միքայէլ.—(ժպտալով) Դուք մի տարօրինակ սովորութիւն ունէք—երկար ժամանակ քայլել սենեակում անկիւնից անկիւն։

Լիւսի.—Դուք այդ նկատել էք։ Երբեմն ես ընդունակ եմ քայլել այդպէս ժամերով։ Մանաւանդ երբ որեւէ մի բան ինչ անհանգստացնում է։

Միքայէլ.—Իսկ ի՞նչ բան է այժմ ձեզ անհանգստացնում։ Այն, որ «Կեանքը» դադարեցրել են։

Լիւսի.—Ո՛չ, ի՞նչ է այդ։ Մենամարտի հարցն է, որ ինչ մի բոլոր հանգիստ չէ տալիս։

Միքայէլ.—Ձեզ, ուրեմն, յայտնի է մենամարտի մասին։

Լիւսի.—Աբրահամ ինչ ասաց։

Միքայէլ.—Ի՞նչը։

Լիւսի.—Ի սէր Աստուծոյ, գուցէ դուք կարող էք նրան յետ կանգնեցնել։

Միքայէլ.—Ո՛չ, այդ անօգուտ է։ Ուշ է։



Լ ի ւ ս ի.—Միթէ ուշ է: Ո՛հ, դատարկ բան է, երբէք ուշ չէ: Համոզեցէք նրան, աղաչում եմ:

Մ ի ք ա յ է Լ.—Ինչպէս կարող եմ:

Լ ի ւ ս ի.—Հասկացէք, այդ բոլորը պէտք է ծանրանայ իմ խղճի վրայ: Մենամարտի պատճառը ես եմ... իսկ ես... իսկ ես... Աստուած իմ:

Մ ի ք ա յ է Լ.—Այո, այդ էլ ծանրանայ ձեր խղճի վրայ... Ցաւօք սրտի, դուք դրա մասին չափազանց ուշ մտածեցիք:

Լ ի ւ ս ի.—Ի՞նչ էք ուզում ասել:

Մ ի ք ա յ է Լ.—Մի քանի օր առաջ, դուք ինձ ձեր գործերին գիտակից արիք: Թոյլ տէ՛ք մի անգամ էլ ձեզ անկեղծութեան հրաւիրել:

Լ ի ւ ս ի.—Խնդրեմ, ասացէ՛ք: Ես ինքս էլ ուրախ եմ, որ կարող եմ գոնէ ձեզ հետ խօսել այդ մասին: Խօսեցէք ուրեմն: Ի՞նչ էք կամենում ասել:

Մ ի ք ա յ է Լ.—(կարճատև լռութիւնից յետոյ): Ահա թէ ինչ եմ ուզում ասել... Հարկաւոր է վերջ տալ:

Լ ի ւ ս ի.—Ի՞նչ:

Մ ի ք ա յ է Լ.—Հարկաւոր է վերջ տալ այդ բոլորին: Այս կամ այն վախճանը տալ այդ ամբողջ պատմութեան:

Լ ի ւ ս ի.—Այո... Հարկաւոր է վերջացնել... Դուք իրաւացի եք... (վհատութեամբ) Բայց ի՞նչպէս... ի՞նչպէս...

Մ ի ք ա յ է Լ.—Դուք պէտք է ամեն բան անկեղծօրէն ասէք Աբրամին:

Լ ի ւ ս ի.—Ասել... ասել... Այդ ես էլ գիտեմ, որ հարկաւոր է:

Մ ի ք ա յ է Լ.—Իմ կարծիքով... եթէ դուք չունէք ոյժ գոհաբերելու ձեզ՝ ձեր պարտականութիւնն է համարձակ և շիտակօրէն ասել նրան ամեն ինչ:

Լ ի ւ ս ի.—Միթէ դուք կարծում էք, որ ես չեմ մտածել այդ բանի մասին: Քանի անգամ ես պատրաստել եմ ասել նրան, և ամեն անգամ էլ կանգ եմ առել, կարծես ինչ որ մի բան յետ է պահում ինձ: Ես չեմ կարող... կը խելագարուեմ... Ձեզ համար հեշտ է այդպէս դատել... իսկ ի՞նչ է իմ դժուրութիւնը, դուք չը գիտէք:

Մ ի ք ա յ է Լ.—Ես հասկանում եմ, որ դա տանջանք է ձեռն համար, բայց ուրիշ կերպ էլ չէ կարող լինել: Դուք ինքներդ ասացիք, որ նա մենամարտում է ձեր պատճառով: Տեսնում էք,

նա նոյն իսկ այդ քայլին դիմեց, որովհետև հաւատում է ձեր սիրոյն:

Լ ի ւ ս ի.—Խեղքս կորցնում եմ...

Մ ի ք ա յ է Լ.—Լիւսի: Խօսեցէք նրա հետ: Գուցէ ամեն ինչ կը վերականգնի... կը մնայ առաջւայ պէս...

Լ ի ւ ս ի.—Կը վերականգնի: Ինչ ասես չէի տալ, միայն թէ արդարև այդպէս լինէր: Հաւատում էք, որ դեռ կարող է խաղաղ վախճան ստանալ:

Մ ի ք ա յ է Լ.—Յամենայն դէպս խօսեցէք նրա հետ, ասացէք բոլորը: Ի հարկէ, այժմ արդէն չարժէ, բայց մենամարտից յետոյ...

Լ ի ւ ս ի.—Ուրեմն դուք կարծում էք, որ մենամարտը կը կայանայ:

Մ ի ք ա յ է Լ.—Եթէ այն մէկը չը հրաժարուի—ի հարկէ:

Լ ի ւ ս ի.—(անհանդուրժեամբ նայելով նրան) Ե՞րբ կը պարզւի այդ: Լսեցէք... իսկ եթէ Աբրամը... եթէ նրան սպանեն...

Մ ի ք ա յ է Լ.—Կարող է պատահել:

Լ ի ւ ս ի.—Ախ... գուցէ... եթէ բանը այդտեղ է հասել... Թող լինի ինչ որ լինելու է:

Մ ի ք ա յ է Լ.—Լիւսի...

Լ ի ւ ս ի.—Ինչ որ փոթորիկ է բարձրացել իմ մէջ: Ես ինքս էլ չը գիտեմ, թէ ինչ եմ տուում (հեկեկալով ընկնում է բազկաթոռի վրա Միքայէլը մօտենում է, նայում է նրա վրա, Լիւսին դադարում է հեկեկալուց):

Մ ի ք ա յ է Լ.—Խեղճ Լիւսի... Ահա թէ բանը որտեղ է հասել:

Լ ի ւ ս ի.—(վեր է կենում) Այո: Վերջ ի վերջոյ հարկաւոր է նրան ասել. Հարկաւոր է վերջ տալ, ինչպէս դուք էք ասում:

Մ ի ք ա յ է Լ.—Եւ որքան շուտ, այնքան լաւ:

Պատուգա:

Լ ի ւ ս ի.—Ինչպիսի տանջանքներ կրեցի ես այդ մի քանի օրւայ ընթացքում: Դուք չը գիտէք այդ: Սկսեց իմ նահանջելը, իմ անկումը: Ես սկսեցի վերադառնալ յետ... օրէցօր, ամսէ ամիս... վերջապէս տարէ ցտարի: Այդ բոլոր երկար տարիները կատարի արագութեամբ դէպի յետ են սլանում, և ես աւելի ու աւելի էի վերադառնում դէպի յետ են սլանող, որտեղից դուրս էի եկել: Ասացէք, մի քան հասկանում էք այդ բոլորից: Ես որ ոչինչ չեմ հասկա-



նում, կորցրել եմ ինքս ինձ: Ո՞վ է Ռուբէնը: Ինչո՞ւ համար և Ռոտեղից նա եկաւ: Այսքան տարի ես բախտաւոր էի... Չեմ հասկանում, չեմ հասկանում...

Մի քաջ էլ.—Ռուբէնը: Բանը Ռուբէնի մէջ չէ: Յանձին Ռուբէնի խօսում է այն ամբողջ աշխարհը, որից դուք դուրս եկաք, նոր կեանք վաստակելու համար: Ռուբէնը ձեր անցեալ օրերի սուերն է միայն: Այդ սուերը յանկարծ կանգնեց ձեր առջև և ուզում է փակել ձեր ճանապարհը:

(բեմի ետևում դանդաղ):

Լիւսի.—Երևի այդ նա եկաւ,

Մի քաջ էլ.—Ո՞վ նա:

Լիւսի.—Ռուբէնը: Նա պէտք էր գար այսօր:

Մի քաջ էլ.—Ես չէի ուզենայ պատահել նրա հետ: Կը գնամ իմ սենեակը, ըթէ հարկաւոր լինեմ՝ կանչեցէք (դնում է դէպի աջ, երկրորդ դռնով):

#### ԵՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

(Ներս է մտնում Ռուբէնը)

Ռուբէն.—Բարի լոյս, Լիւսի:

Լիւսի.—Բարեւ ձեզ:

Ռուբէն.—Մտացած հեռագիրս:

Լիւսի.—Այո:

Ռուբէն.—Կարծես վատ էք տրամադրւած:

Լիւսի.—(լռում է)

Ռուբէն.—Փողոցում ես հանդիպեցի ձեր ամուսնուն:

Նա շատ սառը բարեկեց ու անցաւ:

Լիւսի.—Այո: Նա գիտէ թէ ով էք դուք:

Ռուբէն.—Վաղ թէ ուշ այդ բանը պէտք է լինէր:

Լիւսի.—Հա, ի հարկէ:

Ռուբէն.—Իսկ այդ փաստը առիթ չէ՞ տալիս ձեզ որոշ խորհրդածութիւններ անելու:

Լիւսի.—Ի՞նչ տեսակի:

Ռուբէն.—Որ ես այլ ես չեմ կարող լինել ձեր առնը:

Դա արդէն աւելի քան անյարմար է:

Լիւսի.—Համաձայն եմ ձեզ հետ:

Պատուա

Ռուբէն.—Ես ուզում եմ խօսել, բայց դուք, կարծես, տրամադիր չէք լսելու, բարկացած էք:

Լիւսի.—Ինչի՞ վրայ պէտք է բարկացած լինեմ: Նստեցէք, էլ ինչո՞ւ եւք կանգնել:

Ռուբէն.—(նստում է) Պարզ է, որ ես այսօր վերջին անգամ եմ ձեր տան մէջ: Դա շատ լաւ շարժառիթ է, որպէս զի պարզեց մի քանի հարցեր: Վերջին ժամանակներս, ինչպէս ինձ թւում է, շատ և շատ բան է փոխել մեր յարաբերութիւնների մէջ: Եւ փոխել է, գոնէ ինձ համար, դէպի լաւը: Շատ կարելի է սխալւում եմ: Հօր:

Լիւսի.—Շարունակեցէք:

Ռուբէն.—Լիւսի: Դուք շատ լաւ գիտէք, որ ես սիրում եմ ձեզ: Այդ բանում համոզւելու համար, դուք բաւականաչափ թէ ժամանակ ունէիք և թէ փաստեր: Մինչդեռ ձեր վերաբերմունքը դէպի ինձ աւելի քան անորոշ է: Երբեմն ինձ այնպէս է թւում՝ թէ դուք ինձ պատասխանում էք փոխադարձաբար, երբեմն էլ ես սկսում եմ վհատել: Ես կարծում եմ, այժմ հասել է այն վայրկեանը, երբ դուք պէտք է ասէք ձեր վերջին խօսքը: Այժմ պէտք է խօսեք դուք: Ես սպասում եմ: Ես խնդրում եմ ձեզ, վերջապէս՝ պահանջում եմ:

#### Պատուա

Լիւսի.—Ես պարտաւոր եմ ասելու ձեզ: Դուք ճշմարիտ էք ասում: Այո, այո: Հարկաւոր է շուտով վերջացնել այս կօմեդիան... Բայց սպասեցէք... սպասեցէք: Այսօր...

Ռուբէն.—Ի՞նչ այսօր:

Լիւսի.—Ո՞չ, ոչ: Սպասեցէք: Ոչինչ մի ասէք: (լռութիւն)

Կամ թէ այդ ամենը մի րոպէ է... այն որ այսօր... մի րոպէ...

Ռուբէն.—Լիւսի ի՞նչ է պատահել ձեզ:

Լիւսի.—Ոչինչ, ոչինչ: Ա՛խ, միեւնոյն է: Հարկաւոր է վերջ տալ, պէտք է վերջացնել: Լսեցէք ինձ, լսեցէք:

Ռուբէն.—Բայց դուք ոչինչ չէք ասում: Ի՞նչ լսեմ:

Լիւսի.—(զգայնօրէն) Ի՞նչ էք ուզում ինձանից:

Ռուբէն.—Լիւսի:

Լիւսի.—Հօր, ի՞նչ է: Ո՞վ էք դուք, Ռոտեղից եկաք:

Ռուբէն.—Ես ձեզ բոլորովին չեմ հասկանում:

Լիւսի.—(չք լսելով նրան) Ի՞նչ էք ուզում:



Ռ ու բ է ն.—Արդէն բացատրեցի ձեզ...

Լ իւս ի.—Դուք ուզում էք իմանալ իմ վերջին խօսքը: Ուզում էք իմանալ սիրում եմ ձեզ թէ ոչ: Այդ է ձեր ուզածը, հա՛: Եթէ ես չը սիրէի ձեզ... չը սիրէի ձեզ հետ կապւած իմ տենչերը, մի՞թէ նստած կը լինէիք այստեղ այս բոպէին (ընկնում է բողկաթոռի վրա):

Ռ ու բ է ն.—Լիւսի:

Երկարատեւ պատուզա

Լ իւս ի.—(վեր է կենում գունատ, արտաքուստ խաղաղ) Լսեցէք, Ռուբէն: Ես վճռեցի վերջ տալ այս պատմութեան: Այս բոպէիս կասեմ ձեզ այն, ինչ որ ասելու եմ, և յետոյ դուք կը գնաք... Եւ այլ ևս դուք ոտք չը պէտք է դնէք այս տունը: Լսեցէք...

Ռ ու բ է ն.—Ես պատրաստ եմ ամբողջ ժամերով լսել, Միայն թէ խօսեցէք... Ասացէք մի որեւէ որոշ բան:

Լ իւս ի.—Միանգամայն, միանգամայն որոշ: Դուք հարցնում էք, սիրո՞ւմ եմ ես ձեզ: Այո: Կը գտնեմ ձեր յետևից: Այո, այո, այո... Ես թողնում եմ Արքային... հարկաւոր է միայն, որ ես խօսեմ նրա հետ... և այս օրերս ամեն բան կը վերջանայ է՛, այժմ դուք գիտէք այն, ինչ որ ուզում էիք իմանալ:

Ռ ու բ է ն.—Լիւսի, դու սիրո՞ւմ ես ինձ: Իմ ուրախութիւն:

Լ իւս ի.—(ժողովում է Ռուբէնին, բռնում է նրա ձեռքը) Դու տեսնում ես, ես կուտում եմ. փշրում եմ բոլոր խոջողտանքը, ևս խզում եմ կապերը այն բոլորի հետ, ինչ մի ժամանակ թանգ էր ինձ համար:

Ռ ու բ է ն.—Օ՛, Լիւսի (համբուրում է նրա ձեռքը, ուզում է գրկել):

Լ իւս ի.—(գիմադրելով նրան) Ո՛չ, թող այդ: Միայն ոչ այստեղ, այս տանը: Այժմ գնա: (Ռուբէնը ուզում է ինչ որ բան ասել, Լիւսին ընդհատում է) Գնա, գնա: (մեկնում է ձեռքը) Ցտեսութիւն: Ես իմաց կը տամ:

Ռ ու բ է ն.—Կը սպասեմ: Ամբողջ ժամանակ դրանով կապրեմ:

Լ իւս ի.—Դէ, գնա... գնա: Դու այստեղ չը պէտք է լինես: Մենք կը տեսնենք շուտով: Իմաց կը տամ:

Ռ ու բ է ն.—Լաւ: Ցտեսութիւն: Տայ Աստուած, որ դա լինի շատ շուտով (մի անգամ էլ համբուրում է նրա ձեռքը, գնում է դէպի դուռը):

Լ իւս ի.—Այդ ի՞նչ է: Արդէն: Խելագարւել եմ ես: Ո՛չ, մի՞թէ գնալ... սպասեցէք... ես ուզում եմ ասել ձեզ...

Ռ ու բ է ն.—Ասա, Լիւսի:

Լ իւս ի.—Սպասեցէք... Այն բոլորը, ինչ որ ասացի... վերջնական չէ... Ես ոչինչ չեմ խոստանում... Դուք էս կարող եմ...

Ռ ու բ է ն.—Ձեմ կարողանում հասկանալ քեզ:

Լ իւս ի.—Ա՛խ, լսեցէք գոնէ... Ես ձեզ ատում եմ... Լսում էք, ատում եմ... Ձեմ ուզում ձեզ տեսնել անգամ...

Ռ ու բ է ն.—Լիւսի: Ձէ կարելի, վերջապէս, այդպէս խաղալ մարդու հետ: Հասկացիր, դու ինձ...

Լ իւս ի.—Այս բոպէին հեռացէք այստեղից... Ես կը սկըսեմ ճշալ, եթէ...

Ռ ու բ է ն.—Ինձ լսիր: Ձէ որ դու հէնց նոր ասացիր...

Լ իւս ի.—Ճշմարիտ չէ այն, ինչ որ ասացի: Երբէք, երբէք լինելու չէ այդ:

Ռ ու բ է ն.—Դէ, բաւական է: Դու ինձ տանջեցիր: Ծաղրում, ծիծաղում ես ինձ վրա: Ես տանում էի բոլորը համբերութեամբ, սպասում էի: Բայց ամեն բան վերջ է ունենում: Դու ուզում ես որ ես գնամ: Լաւ, կը հեռանամ: Դու այժմ այնպիսի դուրթեան մէջ ես, որ քեզ հետ խօսելը անկարելի է: Ես գնում եմ, բայց այսօր երեկոյեան ես կսպասեմ քեզ, դու կգաս ինձ մօտ. Եւ այն ժամանակ, դու ինձ պէտք է վերջնական պատասխան ասես: Մտածելու բաւական ժամանակ ունես: Մտածիր ու վճար: Երեկոյեան դու կը գաս և կը տաս վերջնական պատասխանը: Ցտեսութիւն (հեռանում է):

Պատուզա

Լ իւս ի.—(երկու ձեռներով բռնում է գլուխը) Աստուած իմ: Ի՛նչ է կատարւում ինձ հետ... Ի՞նչ եմ անում ես... Շարունակ ցած, դէպի ցած... Այդ աւելի հեշտ է, քան թէ բարձրանալը:

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԻՆ

(Բեմի յետում գահի: Անցնում է մի ուժամանակ, նորից գահի: Երբ է մտնում Միքայէլը)

Մ ի ք ա յ է լ.—Դուք մենակ էք: Ինձ տխրալ թւաց, որ գահի ես տալիս:



Լ ի ւ ս ի.—(ուշքի գալով) Այդ դձուք էք: Ի՞նչ էք ուզում:

Մ ի ք ա յ է լ.—Ես զանգի ձայն լսեցի, մի քանի անգամ: Երևի աղախինը տանը չէ: (Բեմի ետևում նորից զանգ): Այ, լսում էք: Ես կը գնամ բանալու (գնում է նախասենեակ, մի քանի վայրկեան անցած՝ վերադառնում է):

Լ ի ւ ս ի.—Հ՞ք, ի՞նչ կայ: Ո՞վ էր:

Մ ի ք ա յ է լ.—Շատ անախորժ բան:

Լ ի ւ ս ի.—Ի՞նչ է: Ասացէք շուտով: Մենամարտի՞ մասին է

Մ ի ք ա յ է լ.—Ոչ:

Լ ի ւ ս ի.—Հապա ի՞նչ կայ, թվ էր եկել:

Մ ի ք ա յ է լ.—Ոստիկանն էր եկել... ծանուցադրով:

Լ ի ւ ս ի.—Ինչպէս, ի՞նչ ծանուցադրի: Ասացէք շուտով:

Մ ի ք ա յ է լ.—Ծանուցադրով իմաց է տրուում Աբրամին, որ նա երեք օրւայ ընթացքում, պէտք է թողնէ քաղաքը: Այդպէս ասաց ոստիկանը. սակայն ծանուցադիրը չը տեսց ինձ: Ես հէնց այդպէս էլ սպասում էի: Ձեզ երևի յայտնի չէ, որ Աբրամը երէկ երկու անգամ հրաւիրւել է ոստիկանատուն ե հարցաքննութեան ենթարկւել:

Լ ի ւ ս ի.—Նշանակում է նրան աքսորում են:

Մ ի ք ա յ է լ.—Այո:

Լ ի ւ ս ի.—Իսկ ո՞ր:

Մ ի ք ա յ է լ.—Այդ արդէն իր գործն է: Նա միայն այստեղ ապրել չէ կարող:

Լ ի ւ ս ի.—Ի՞նչ պէտք է լինի, Միքայիլ. Այդ էր պակաս: Ասացէք, ի՞նչ կը լինի Աբրամի դրութիւնը:

Մ ի ք ա յ է լ.—Առանձին ոչինչ: Կը գնայ այստեղից, ահա բոլորը:

Լ ի ւ ս ի.—Իսկ ի՞նչ անեմ ես:

Մ ի ք ա յ է լ.—Ի՞նչ: Ես արդէն քիչ առաջ ասացի: Այժմ այլևս անկարելի է յետաձգել: Այդ երեք օրը ձեզ համար էլ ժամանակամիջոց է:

Լ ի ւ ս ի.—Ա՛խ, ինչո՞ւ համար է, ինչո՞ւ համար է այդ բոլորը: (Առթիւն): Բայց սպասեցէք: Այժմ ինձ համար ամեն ինչ պարզ է դառնում:

Մ ի ք ա յ է լ.—Ի՞նչ էք ուզում ասել:

Լ ի ւ ս ի.—Վերջացաւ: Այժմ մտածել անգամ չէ կարելի Աբրամին թողնելու մասին: Նա գնում է... նրան աքսորում են... թողնել նրան հիմա... դա հրէշաւոր բան կը լինի: Ինչ էլ որ լինի՝

ես պէտք է ուղեկցեմ նրան: Այդ դժբախտութիւնը ես պարտաւոր եմ կիսել նրա հետ...

Մ ի ք ա յ է լ.—Լսեցէք ինձ...

Լ ի ւ ս ի.—Ո՛չ, ո՛չ...

Մ ի ք ա յ է լ.—Լսեցէք ինձ, Լիւսի: Բոպէական է այդ բոլորը: Երկար չէք դիմանայ... և նորից կը սկսւի նոյնը: Ընդհակոռակը. եթէ վճռել էք գնալ, զնացէք նրանից հիմա: Նա կը սկսի նոր կեանք... դուք նոյնպէս... Թէ նրա և թէ ձեզ համար աւելի լաւ կը լինի, եթէ հէնց այժմ վճռւի ամեն ինչ: Հարցրէք ինքներդ ձեզ, և կը տեսնէք որ ես ճիշտ եմ ասում:

Լ ի ւ ս ի.—(վատութեամբ) Ա՛խ, ես ոչինչ, ոչինչ չեմ հասկանում: Ինչո՞ւ համար է այս բոլորը: Կարծես ամբողջ աշխարհը խօսքը մէկ է արել... ամեն կողմից, ամեն կողմից...

Մ ի ք ա յ է լ.—Այո, հանգամանքները այնպէս են դասաւորւում, որ դուք այլևս ձգձգել չէք կարող: Լսում էք, այնտեղ բաց են անում դուռը, Աբրամն է:

Լ ի ւ ս ի.—Աստուած իմ... Աստուած իմ... (երկուն էլ կանգնած սպասում են Աբրամին):

#### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԻՆԼ

(Դռնդաղ բայլերով մտնում է Աբրամը, ձեռքին մի ինչ որ թուղթ: Նա կանգ է առնում: Պաուզա):

Ա բ բ ա մ.—Ձեր դէմքերից նկատում եմ, որ իմանում էք բանը ինչու՞նք է: Մեր տան մօտիկ ինձ հանդիպեց ոստիկանը և յանձնեց այս թուղթը: Այո... կատարեց: Ինձ աքսորում են, խրմբագիրը կալանաւորւած է: Ուրեմն, այս երեք օրւայ ընթացքում, ես պէտք է վերջ տամ այն բոլորին: Ինչ որ դեռ ես կապում է ինձ այս քաղաքի հետ, և ապա հեռանամ: Մի աստիճան էլ անցայ: Այդպէս ուրեմն: Սկսւում է իմ կեանքի նոր շրջանը:

#### Պաուզա

Մ ի ք ա յ է լ.—Աստուած տայ, որ դա իսկապէս լինի նոր կեանք:



Աբրահամ.—(չըմբռնելով նրա խօսքերի իմաստը) Այո... նոր կեանք:

Լիւսի.—Աբրահամ:

Աբրահամ.—Ի՞նչ է Լիւսի: Ի՞նչ ես ուզում ասել, իմ անգին ընկեր (մօտենում է նրան, բռնում ձեռքը և շոյում):

Լիւսի.—Ի՞նչ... իսկ մենամարտը:

Աբրահամ.—Մենամարտը էլ չի կայանայ: Նա հրաժարւեց:

Լիւսի.—Փառք Աստուծոյ:

Աբրահամ.—Գուցէ աւելի լաւ է, որ այդպէս եղաւ: Իմ սիրելիներս: Այսօր ես նոր գարուն վաւտակեցի: Այսօր ես վերադարձրի իմ հոգու խաղաղութիւնը:

Միքայէլ.—Ինչի՞ մասին ես խօսում:

Աբրահամ.—Ի՞նչ կը պատահի ինձ հետ, ուր կը լինեմ ես. չը գիտեմ: Եւ այնուամենայնիւ ես չեմ սարսափում այդ անյայտութիւնից: Այսօր ես համոզւեցի, որ ուր էլ լինիմ ես, դու, Լիւսի, միշտ ինձ հետ կը լինես: Ժամարիտ չէ, Լիւսի: Մեզ հալածում են այստեղ: Շատ լաւ: Հեռանանք այստեղից համարձակ և ուրախ: Գնանք հեռու, ուրիշ տեղեր, ուրիշ մարդկանց մօտ: Իմ թանգագին ագնիւ ընկեր: Ձեռք ձեռքի տաւ, մենք կը գնանք առաջ, դեռ շատ երկար կը գնանք: Ես արդէն տեսնում եմ մեր ամբողջ անորոշ պատկերը... Ո՛րքան գեղեցիկ է նա, որքան հսկայ, փառահեղ: Նա դեռ հեռու է, հարկաւ, բայց այդ հեռուն չը պիտի վախեցնի մեզ, ոչ, նա կանչում է մեզ ու խոստանում: Ուրեմն գնանք այնտեղ, Լիւսի: Դու կը գաս ինձ հետ, այնպէս չէ: (Լիւսին լուռ է): Պատասխանիր ինձ, իմ անգինս: Ամբողջ աշխարհի առաջ ասա: Նայիր իմ աչքերին ուղիղ և ասա: Դէ, նայիր, Լիւսի:

Լիւսի.—(հեկեկալով) Աբրահամ:

Աբրահամ.—Լիւսի: Դու կարծես թէ վախենում ես նայել իմ աչքերին: Դէ, իմ սիրուն Լիւսի:

Լիւսի.—(զանգաղ կերպով բորձրացնում է գլուխը և նայում նրա աչքերին, յանկարծ, յետ յետ է գնում և ընկնում Աբրահամի ձեռքերին):

Աբրահամ.—Ի՞նչ պատահեց քեզ: Միքայէլ, Ղուր: (Միքայէլը շուր է ածում զրաֆինից և տալիս): Ի՞նչ պատահեց քեզ, ի՞նչ պատահեց:

Լիւսի.—(Ղուր է խմում) Ոչինչ... Շնորհակալ եմ... կանցնի: Ես այսօր առաւօտւանից ինձ վատ եմ զգում: Ես գնամ, պառկեմ, հանգստանամ:

Աբրահամ.—Բայց Լիւսի...

Լիւսի.—Այո... ինձ անհրաժեշտ է մենակ մնալ... Ես գնամ... (ուզում է գնալ):

Աբրահամ.—Թեզ չի կարելի մենակ թողնել, դու հիւանդ ես:

Լիւսի.—(չը կարողանալով զսպել իրան) Ա՛խ, թողէք ինձ, վերջապէս: Ի՞նչ էք ուզում ինձանից: (Ղղային ճիչ է արձակում) Թոյլ տէ՛ք ինձ գոնէ մի րոպէ մենակ մնալ (Լիւսին հեռանում է աջ դռնով):

Աբրահամ.—(երկար ժամանակ նայում է նրա ետեւից) Ի՞նչ է նշանակում այդ: Հ՞ը... Ի՞նչ է նշանակում: (Միքայէլը լուռ է):

Աբրահամ.—Միթէ... (մտածմունքի մէջ է ընկնում):

Պատուգա

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



# ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Միևնոյն կահաւորութիւնը: Անցել է մէկ ու կէս օր: Ուշ գիշեր է: Պատուհանները վարագոյրները իջեցրած են: Կաթինեղում մութն է: Հիւրասենեակը լուսաւորւած է լամպի և դաշնամուրի մոմերի լոյսով: Գործողութեան ընթացքում լամպը մարում է, նաեւ վերջանալու պատճառով: Գործողութեան վերջում առաւօտ է:

## Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՏԵՍԻՒ

Աւանսցենայում, հիւրասենեակի ձախ անկիւնում, նստած է Ռուբէնը: Անցնում է բաւականին ժամանակ: Այլ կողմից ներս է մտնում Լիւսի: Չը նկատելով Ռուբէնին, նստանում է մի քանի անգամ, ապա նստում դաշնամուրի առջև: Մոմերի աղօտ լոյսը ընկնում է նրա դէմքին: Նա գունատ է: Աչքերը փայլում են անսովոր փայլով: Աչքերի տակ պատել են մութ շրջանակներ: ձախատին, ունեւերի մէջ տեղում, երևում է փոքրիկ կնճիւ: Շրթունքները ամուր կերպով սեղմւած են: Մազերը՝ անկարգ

Ռ ու ը է ն.—(կամաց) Լիւսի: (Լիւսին չէ լսում: Նա յաճախ ձեռքը դնում է ձախատին. շարժումները ջղային են: Մօտենում է դաշնամուրին, նստում է):

Ռ ու ը է ն.—Լիւսի: (Լիւսին դարձեալ չէ լսում: Ռուբէնը վեր է կենում տեղից, մօտենում նրան):

Ռ ու ը է ն.—Լիւսի:

Լ ի լ ս ի.—(ցնցւում է և յետ նայում) Դուք այստե՞ղ էք, դուք դեռ այստե՞ղ էք:

Ռ ու ը է ն.—Հապա ռիտեղ պիտի լինեմ ես:

Լ ի լ ս ի.—Ես ասացի որ չեմ կարող ընդունել ձեզ, և նորից այդ կրկնում եմ: Գնաք բարեալ (ուզում է գնալ դէպի աջ):

Ռ ու ը է ն.—(կտրելով նրա ձանապարհը) Սպասի՛ր, Լիւսի, դու իրաւունք չունես այդպէս վարւելու:

Լ ի լ ս ի.—(կանգնում է և հայեացքով չափում նրան ոտից մինչև զուլի) Իրաւունք չունեմ:

Ռ ու ը է ն.—Այո՛, ի հարկէ:

Լ ի լ ս ի.—Թոյլ տւէ՛ք ինձ անցնել իմ սենեակը:

Ռ ու ը է ն.—Սպասի՛ր, Լիւսի, չէ՞ որ դա տարօրինակ է. ինչո՞ւ ես դու արգելում ինձ լինել քեզ մօտ: Այս ամբողջ օրւայ ընթացքում ես կարօտել եմ քեզ, կարօտել եմ քո դաւանքները: Բացի այդ, մենք խօսելու ու վճռելու բան էլ ունենք...

Լ ի լ ս ի.—Ես չեմ ուզում ոչ մի բանի մասին խօսել: Թողէ՛ք ինձ:

Ռ ու ը է ն.—Լսի՛ր ինձ, Լիւսի: Յամենայն դէպս այժմ, երէկանից յետոյ, դու չը պէտք է այդպէս վարւես... Դու պէտք է յայտնես ինձ՝ թէ ինչ ես մտադիր անելու... Մենք կը խօսենք կը մտածենք միասին... Մեր տրամադրութեան տակ մնում է մի օր միայն: Լիւսի, դու պարտաւոր ես ասելու ինձ ամեն բան, իբրև ընկերոջ... Վերջապէս, իբրև ամուսնու:

Լ ի լ ս ի.—(ցնցւում է ամբողջ մարմնով):

Ռ ու ը է ն.—Ինչո՞ւ է քեզ զարմացնում այդ, չէ՞ որ Աստծոյ առաջ ես քո ամուսինն եմ այժմ: Ես հրճանքով կրկնում եմ այդ խօսքը, այո՛, այո՛... Այժմ դու իմն ես: Երէկանից յետոյ, այսօր ես ամբողջ օրը կախարդւած եմ հրաշակերտ երազով—և այդ երազը դու նւիրեցիր ինձ երէկ...

Լ ի լ ս ի.—(խեղաւած ձայնով) Լսեցէ՛ք, ի սէր Աստուծոյ լռեցէ՛ք:

Ռ ու ը է ն.—Ո՛չ, ես չեմ ուզում լռել... Ո՛ր, երէկ, միայն երէկ ես հասկացայ թէ ում է ուղարկել ինձ համար երկինքը, յանձին Լիւսի... միայն երէկ հասկացայ ես թէ ինչ երջանկութեան արժանացայ ես: Քո գնալուց յետոյ, իմ սենեակը լի էր սքանչելի բուրմունքով, որ լցնում էր սենեակիս բոլոր անկիւնները, իւրաքանչիւր թիզ, ուր ոտք էիր դրել դու, լի էր այդ բուրմունքով, և ես բոլոր առ բոլոր արբենում էի նրանից: Քո գնալուց յետոյ, իմ սենեակը ինձ համար թւում էր մի հեքեաթային ամբողջ, որի կամարների տակ ես վաստակեցի գերազոյն երջանկութիւնը... Ո՛ր, վերջապէս ես խեցի քեզ այդ մարդու, այդ անշնորհ խելօքի ձեռքից...

Լ ի լ ս ի.—(ամբողջովին գունատ՝ նհարդային ճիչ է արձակում)



Բաւականն է, լոկեցէք վերջապէս... Բննէք ուզում ինձանից, հրէշ...

Ռ ու ր է ն.— Լիւսի, Լիւսի...

Լ իւ ս ի.— Դուք հօ հասել էք ձեր նպատակին, ստացել էք այն, ինչ որ ուզում էիք, էլ ի՞նչ էք կանգնել այստեղ...

Ռ ու ր է ն.— Լիւսի, մի վերաւորիք ինձ, միթէ...

Լ իւ ս ի.— Ա՛հ, չը վերաւորել: Իսկ դժուր... դուք չը վերաւորեցիք ինձ, ո՛չ... դուք պղծեցիք ինձ ամբողջովին, ոտից մինչև գլուխ... դուք պղծեցիք իմ հոգին... (Իստեղիկ կերպով) դուք ոչնչացրիք ինձ:

Ռ ու ր է ն.— Անհասկանալի է: Այսօր, ամբողջ օրը ես ներշնչած էի երէկւայ երեկոյով, ես սրտատրոփ սպասում էի այն ժամին, երբ նորից կը տեսնեմ քեզ... Բայց գալիս եմ այստեղ— դու ինձ չես ընդունում, ասում ես որ թողնեմ քեզ, հեռանում... Անհասկանալի է:

Լ իւ ս ի.— Այո մի օրը... Ո՛հ, ինչ կատարեց ինձ հետ այս մի օրւայ ընթացքում... Աչքերս բացեցին կարծես... իմ առջև կանգնեց սարսափը, ահռելի սարսափը... ես գլորւում էի բարձրից դէպի անդունդ, անսահման անդունդ... Տէ՛ր Աստուծ, ահա ես նայում եմ ձեզ վրա, և դուք թւում էք ինձ այնպիսի մի ոչնչութիւն:

Ռ ու ր է ն.— Ձէ, դու այժմ բոլորովին աննօրմալ ես:

Լ իւ ս ի.— (չլսելով նրան) Այն, ինչ որ թւում է ձեզ կախարդական երազ, գերագոյն երջանկութիւն,— ինձ համար մի դժոխային մղձաւանջ է: Ո՛հ, այդ երեկոն... ահ սոսկալի է...

Ռ ու ր է ն.— Դու այնպիսի ձևով ես այդ ասում, կարծես թէ ամեն ինչ կատարել է առանց քո կամքի...

Լ իւ ս ի.— Ահա, ահա այն խօսքը, որ ես սպասում էի թէ դուք կասէք, և դա ձեր միակ արդարացումն է... Ես եկայ ձեզ մօտ... ինչո՞ւ եկայ. ես ինքս էլ չը գիտեմ... եկայ, որովհետեւ եթէ չը գայի, ես անձնասպանութիւն կը գործէի... եկայ, որովհետեւ խեղդում էի մենակ, որովհետեւ հոգուս բոլոր հակասութիւնները գրոհ տւին ինձ վրա... եկայ, որովհետեւ փախչում էի Աբրամի հայեացքից, փախչում էի Միքայէլի դատողութիւններից... Ի՞նչ էի որոնում ես ձեր հոգու մէջ— այդ էլ չը գիտեմ... բայց որոնում էի... բայց ծարաւ էի: Իմ հոգու ամբողջ զիւրահաւատութիւնն էի բերում ես ձեզ մօտ, հոգուս ամբողջ կարօտն էի բերում ես ձեզ մօտ, հոգուս վերքերն էի բերում ամոքելու համար... Ո՛հ, անիծեալ լինի իմ այն կամքը. որ օգնութեանն էք դիմում դուք

այժմ... Ա՛խ, այդ սարսափել գիշերը (ցնցում է ոտից մինչև գլուխ): Անէծքի պէս, յաւիտեան կը յիշեմ ես ձեր հայեացքը... այն լըւած, բաւարարած հայեացքը... Եւ այդ հայեացքի անտարբերութեան ու սառնութեան մէջ ես կարդացի իմ դատաւճիռը... (Թուացած, կտրած ձայնով) Ա՛խ, թողէք ինձ, հեռացէք (ընկնում է բաղկաթռի վրա):

Ռ ու ր է ն.— Ներիւր, բայց ես ոչինչ չեմ հասկանում: Իսկապէս, աւելի լաւ կը լինի, որ գնամ— դու այժմ շատ տարօրինակ կերպով ես տրամադրւած— բայց վաղը առաւօտեան ես դարձեալ կը սպասեմ քեզ ինձ մօտ, և մենք կը խօսենք:

Լ իւ ս ի.— (նայելով նրան) Ի՞նչ... միթէ դուք չը հասկացաք ինձ: Դուք կը գնաք այս ըրպէիս, և կը գնաք ընդ միշտ: «Մենք պէտք է խօսենք», «մենք պէտք է մտածենք»... Ի՞նչ բանի մասին խօսել ու մտածել, քանի որ երբէք այլևս դուք այսպէս կանգնած չէք լինի աչքերիս առջև: Մենք երբէք այլևս չենք հանդիպի իրար:

Ռ ու ր է ն.— Ձեմ հասկանում... Ի՞նչ, ուրեմն դու ուզում ես մնալ Աբրամի հետ:

Լ իւ ս ի.— Ա՛խ, ձեր ի՞նչ գործն է թէ ինչ կը լինիմ ես:

Ռ ու ր է ն.— Ասա ինձ, Լիւսի, ի՞նչ է պատահել, որտեղից է այդ բոլորը:

Լ իւ ս ի.— Ի՞նչ է պատահել... Ռուբէն, Ռուբէն... Ինչ է պատահել... Այն որ ես արթնացայ ահռելի երազից և տեսնում եմ, որ այդ երազը ջախջախեց իմ հոգին, ոչնչացրեց իմ երջանիկ լինելու իրաւունքը...

Ռ ու ր է ն.— Իսկ մեր սէ՛րը, Լիւսի, իսկ երէկւայ երեկո՞ն:

Լ իւ ս ի.— Մեր սէ՛րը: Նա չկայ, նա գոյութիւն չունի: Դա մի պատրանք էր, սոսկալի պատրանք: Նա եկաւ և ջարդուփշուր արեց իմ կեանքը: Գնացէք... հեռացէք, ես ոյժ չունիմ տեսնելու ձեզ...

#### Պատուպա

Ռ ու ր է ն.— Եւ այսպէս Աբրամը...

Լ իւ ս ի.— Միք արտասանի այդ անունը: Հեռացէք այս օրպէիս: Գնացէք, ազնւում եմ ձեզ, եթէ ո՛չ ես կը սկսեմ ճշալ, ամբողջ քաղաքը կը զարթեցնեմ ճշերովս:



Ռ ու բ է ն.—Ես ուզում էի միայն ասել, որ Աբրամը, ըստ երևոյթին, նորից, էլի մի անգամ, յաղթեց: Ի՞նչ արած, մնա նրա հետ: Դու ասացիր, որ ես հասել եմ իմ նպատակին, ստացել եմ այն, ինչ որ ուզում էի, և այժմ կարող եմ հեռանալ: Ո՛չ, այդ դժուար է, որ ստացար ինձանից այն, ինչ որ ուզում էիր, և հիմա ես հարկաւոր չեմ այլևս քեզ: Մնա Աբրամի հետ և վստակիր քո «երջանկութիւնը»... և ստիր նրան, ստիր նրա զրկում այնպէս, ինչպէս ստում էիր ինձ... իմ զրկում...

Լ ի ւ ս ի.—(բոլորովին գունատ, վեր է կենում տեղից) Սրիկա:

#### Պատուգա

Ռ ու բ է ն.—Մնաք բարեաւ (հեռանում է):

Լ ի ւ ս ի.—(երկարատե լուսթիւնից յետոյ) Իսկ եթէ մարդ ունեցել է մի չափ վեհ բան և կորցրել է այն: Նա ասաց՝ «միայն մի ելք է մնում,—մահ»: Այո, դուք իրաւացի էք... չափազանց իրաւացի, պարոն Միքայէլ... (նստում է) Ա՛հ, հարկաւոր է... հարկաւոր է... այլևս անկարելի է հետաձգել: (լսում է ինչպէս միւս սենեակում ժամացոյցը խփում է երեքը): Ժամը երեքն է... նրանք դեռ չկան...

#### ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍՒԼ

(Նախասենեակից լսում են թեթե քայլեր: Լիւսին չէ լսում: Կաթինետն են մտնում Աբրամը և Միքայէլը: Աբրամը վառում է լամպը):

Ա բ բ ա մ.—(քրքրելով սեղանի թղթերը) Ոչինչ նոր բան չկայ: Մի ինչ որ հին նամակ... Այո, ժամանակ է քնելու... Այնպէս եմ յոգնել. նոյնիսկ ծուլանում եմ գնալ, հանել: (նստում է) Վաղը չէ միւս օրը գնում եմ, վճռած է և ստորագրւած: Գնում եմ: Այ, քեզանից միայն ես չէի ուզե՞նալ բաժանել:

Մ ի ք ա յ է լ.—Երկու-երեք ամսից յետոյ մենք դարձեալ կը տեսնուենք:

Ա բ բ ա մ.—Եւ դարձեալ ոչ երկար: Ես այնպէս եմ ընտելացել քեզ. Դու ինձ շատ բաներում օգնում էիր: Պայքարի ոգևորութեան միջոցին ես յաճախ մոռանում էի ինձ, անձնատուր էի լինում ընդհանրական բռնկումներին: Եւ դու միշտ էլ կարո-

ղանում էիր ցոյց տալ իրերի իսկական դրութիւնը՝ իրանց բնական լոյսով: Ես սիրում էի մեր երկարատե զրոյցները քեզ հետ: Միքայէլ, դու շուտ-շուտ գրիր, գրիր մանրամասն, ընդարձակ նամակներ:

Մ ի ք ա յ է լ.—Էլ ի՞նչ ասել կուզի:

Ա բ բ ա մ.—Իմ անգին ընկեր, դու միակն ես... էլ ոչ որ չունեմ...

Մ ի ք ա յ է լ.—Ոչ ոք...

Ա բ բ ա մ.—Այո, Միքայէլ, ոչ ոք: Այն, ինչից որ վախեւում էի, արդէն իրագործւում է... Այդ միտքը այնպէս է տանջում ինձ... Ասա, Միքայէլ, ի՞նչ անեմ, ինչպէ՞ս վարեմ... Եւ ինքը... նա ինքը չէ գալիս ինձ օգնութեան... Եթէ գոնէ դար, խօսէր ինձ հետ... Տանջանք է... տանջանք: Եւ ես շարունակ սպասում եմ մի ինչ որ բանի, որ պէտք է գայ, որ կարող է վրա հասնել ամեն մի բոլոր... և որից ես վախենում եմ: Ես անգոր եմ: Իսկ այդ անխուսափելի է... Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ...

Մ ի ք ա յ է լ.—Դէ լաւ, հանդարտւիր:

Ա բ բ ա մ.—Հանդարտւիր... Ի՞նչպէս կարող եմ հանդարտ լինել... Երէկ և այսօր ամբողջ օրը ես հանգիստ չունեմ: Հոգումս, ուղեղումս բնակւել է մի ինչ որ որդ, և այդ որդը կրծոտում է ինձ... կտոր-կտոր է անում սիրտս, անտանելի է... սարսափելի... (Պատուգա: Լիւսին, որ մի փոքր առաջ վեր էր կացել և մօտեցել դռնամուրին, յանկարծ սկսում է նւագել): Այդ ի՞նչ բան է: Մի՞թէ Լիւսին է: Հապա մի գնանք այնտեղ: (Աբրամը և Միքայէլը անցնում են հիւրասենեակ): Լիւսին, դու դեռ քնած չես:

Լ ի ւ ս ի.—(շարունակելով նւագել) Ահ, այդ դժուար էք, պարոններ:

Ա բ բ ա մ.—Արդէն ժամը երեքն է, նոյնիսկ աւելի:

Լ ի ւ ս ի.—(նւագելով) Լսում ես, Աբրամ, ես նւագում եմ «Աշնանային երգը»: Մի խանդարիր ինձ: (նա նւագում է: Աբրամն ու Միքայէլը լուռ լսում են: Երկարատե պատուգա: Վերջապէս Լիւսին վերջացնում է, խփում է կլաւշներին և վեր է կենում տեղից):

Մ ի ք ա յ է լ.—Այդ ի՞նչ բան էիք նւագում:

Լ ի ւ ս ի.—Չայկովսկու «Աշնանային երգը»: Աբրամը այնքան սիրում է այդ երգը:

Մ ի ք ա յ է լ.—Որքան թախիժ կայ այդ երաժշտութեան մէջ:



Լ ի ւ ս ի.—Այո...Աշո՞ւն...Թախծալի է այդ խօսքը...Թուում է թէ զգում ես, ինչպէս խայթող քամին փչում է ուժգին և պուկում ծառերի վերջին ծածկոցը։ Թախծով է շնչում դժգոյն երկնակամարը և մերկացած ծառերը և դեղնած, հողի հետ խառնւած, քամուց հալածւող տերեւները։ Եւ հողիդ էլ դառնում է մռայլ ու գունատ... Ասես, անցած ցնորքների, անցեալ կեանքի թաղման երգը լինի—այնպէս է հնչում այդ սարսափելի խօսքը...Հոգու աշուն.—այստեղ մենք թաղում ենք ամեն բան...ամեն բան... և մնում է միայն կարօտը...Լաւ է այդ կարօտը, եթէ ապագայում դեռ մի նոր գարուն կայ քեզ համար։ Իսկ եթէ այդ աշունը տևի մշտնջենական,—կարօտն է, որ մնում է իբրև կեանքի միակ ուղեկից։ Աշուն...աշուն...անթափանցելի խաւար...Իսկ յետևում—հրդեհի վերջալոյսը...Սակայն ինչ ծիծաղելին եմ ես, կանգնել եմ ու խօսում ձեզ հետ աշնան և կարօտի մասին։

*U. p. m. d.*—*L. h. u. f.*

Մ ի ք ա յ է ւ... (մեքենայաբար կրկնելով) Լաւ է այդ կարօտը, եթէ ապագայում դեռ նոր գարուն կայ... Սակայն մի բան. այսօր յունիսի ինն էր, գարնանային ամենափայլուն օրը, իսկ դուք նւագում էք աշնան մեղեդին...

Ա ը ը ա մ. — (մօտենալով Նիւսիին) Նիւսի.

ᐱ ᐅ ᐱ ᐅ ᐅ. - ᐅᐅᐅᐅ ᐅᐅᐅᐅ

Ա. Բ. Բ. Կ. Կ. — Ո՛րքան յոգնած, տանջւած ես երկումս: (բռնում է շոյում Լիւսիի ձեռքը) Փոքրիկ, սիրելի ձեռք...

L t u t. — U's...

Ա թ թ ա մ. — Ի՞նչ, ի՞նչ է, Լիւսի:

1. Ի՞նչ է—2ը գիտեմ, 3ը գիտեմ... (կամաց լալիս է),

Ա Բ Բ ա մ.— Լիւսի, Լիւսի, հանազարտաւիր... Նու աղղղէս: (Լիւսին դադարում է լալուց) Լիւսի (երկար նայում է նրա աչքերին): Ծա ուզում եմ խօսել քեզ հետ... Մինք խօսելու այնքան: Ըստ ունենք...

Լ ի ւ ր .— (հարգել լսելի) Այն:

Ա Ր Բ Ի.—Գնանք այնտեղ, Լիւսի, այն սենեակը, և խօսենք: Այնտեղ վառու՞մ է գրանիթեայ լամպը, յիշում ես, ինչպէս սիրում էինք մենք երկար ժամերով նստել այդ լամպի լոյսի տակ: Խօսելու այնքան բան կայ, այնքան շատ: Գնանք, ջանիկս, այժմ:

Լ Ի ւ ս Ի.—(Հազիւ լսելի) Գնանք: (Լիւսին և Աբրամը անցնում են կարիներու Միքայելը, որ մնացել է հիւրասենեակում, մի փոքր յետոյ մօ-

տենում է պատուհանին, վեր է բարձրացնում վարազոյրները և բաց անում պատուհանը: Դուրսը բաւականին լուս է):

Ա Ք Ր ա մ.—(Մտանցնելով Լիւսիին գահաւորակի մօտ) Ահա, նրա-  
տիր այստեղ: Ես էլ կը նստեմ կողքիդ, և մենք կը խօսենք:  
(լուսթինից յետոյ) Ես ուզում եմ խօսել հանգիստ կերպով, որքան  
կարելի է հանգիստ: Լիւսի, վերջին օրերս ես շատ եմ տանջւել,  
շատ եմ մտածել... շարունակ մտածել եմ քո մասին... և իմ մա-  
սին... առհասարակ մեր կեանքի դասաւորման մասին, այն դասա-  
ւորման, որ ստեղծւել է վերջին օրերս: (յուզուժ է, մի վայր-  
կեան լուռ, ապա, յաղթելով յուզմունքը՝ շարունակում է) Ես ուզում եմ  
ասել, Լիւսի, որ ես շատ լաւ տեսնում եմ, որ այն բոլոր թիւերը  
որ միացնում էին մեզ, հետզհետէ թուլանում են և կտրւում: Ես  
տեսնում էի քո լուռ տանջանքները, տեսնում էի այն կատաղի  
կոիւր, որ կատարւում էր քո հոգու մէջ: Քո այդ լուռ տանջանք-  
ները, Լիւսի, շարունակ արձագանք են գտնում իմ հոգու մէջ,  
քո տանջանքները և իմ տանջանքներն են, քո հոգեկան կոիւր և  
իմ հոգու կոիւն է: Եւ այդ կոիւր յանկարծ մի նոր աշխարհ բա-  
ցեց ինձ համար... ու ես տեսայ, ես հասկացայ թէ՛ ճշմարտ մեղա-  
ւոր եմ քո առաջ...

Լ ի ւ ա ի. — ԴճԼ, դու մեղաւոր ես իմ առաջ:

Ա ռ ա մ.—Այո՛, այո՛, Լիւսի: Ինձ հոմար պարզ դարձաւ, որ ես մինչև այժմ ինքնախաբէութեամբ էի զբաղուում ու, միևնոյն ժամանակ, խաբում էի քեզ:

ἡ ἑλπίς.—Ἐλπίδιος:

Ա. Բ. Բ. ա. մ.—Մի գարմանար, Լիւսի, դա այդպէս է: Իրաւ, ինչ իրաւունք ունէիր դու ինձնից սպասել, երբ նւիրեցիր ինձ ըր կեանքը, և ինչ ստացար: Ես իմ միամտութեան մէջ կարծում էի, որ խել եմ քեզ հին կեանքից և ստեղծել քեզ համար մի նոր կեանք: Սակայն, ես չարաչար սխալւած էի... Եւ ահա, Լիւսի, այժմ տեսնելով ու հասկանալով այդ բոլորը, ես ասում եմ, այսպէս այլևս անկարելի է ապրել. պէտք է մի մեծ խաչ դնել մեր այս վեցամեայ կեանքի վրա, և բոլորովին վերակազմել, կերպարանափոխել այն...

Լ ի ւ ս ի. — (Ղեբ 5 Կենում ու նայում Աբրամին) Աբրամ..

Ա Բ Ը Մ ՈՒ.—Ինչպէս կը կազմուի այդ նոր կեանքը, ինչ ձև կուեննայ նա, ես չը գիտեմ, բայց մի ինչ որ բան զգում եմ... Թուում է թէ հասնում է ինձ այդ նոր կեանքի շունչը: Յամենայն դէպս այն, ինչ կը լինի այն ժամանակ, նման չի լինի հիօփկ-



ւանին... Սակայն ինչ տարօրինակ կերպով ես դու նայում ինձ, Լիւսի...

Լիւսի.— Տէր Աստուած, որքան ոյժ կայ քո մէջ, Արամ, որքան զօրեղ ես դու...

Արամ.— Ձօրեղ եմ: Լիւսի, եթէ դա այդպէս է, դու ինքդ գիտես, որ շնորհիւ այն մեծ սիրոյ, որով ես սիրում եմ քեզ: Իմ անգին, իմ սիրելի Լիւսի... (ցանկանում է գրկել Լիւսին: Լիւսին մի վայրկեան կարծես ընդառաջ է գնում այդ ցանկութեան, բայց յանկարծ, ցնցելով, յետ է քաշւում):

Լիւսի.— Ախ ո՛չ...

Արամ.— (ապշած) Ո՛չ: (երկարատե լռութիւնից յետոյ) Ես այդ նախատեսել էի: (կրկին լռութիւն): Լիւսի, այն, ինչ որ ասում էի, նշանակութիւն ունի ի հարկէ այն դէպքում միայն, եթէ քո մէջ վերջնականապէս չէ մարել քո սէրը: որ նա նւազել է և ազօտել, ես այդ ի հարկէ տեսնում էի, հասկանում էի... Ի հարկէ, եթէ դու այլևս չես սիրում... ինձ հետ մնալը ծանր կը լինի քեզ համար... (Լիւսին նորից ընկնում է գահաւորակի վրա և դարձնում է իր դէմքը միւս կողմ): Եւ եթէ դու կուզենաս թողնել ինձ, ես այդ չեմ կարող արգելել քեզ... Այսօր ես ամբողջ օրը մտածել եմ այդ բանի վրա... շատ եմ մտածել և տանջւել... սակայն չը խօսենք իմ տանջանքների մասին, խօսքը այժմ քո մասին է:

Լիւսի.— (չը նայելով նրան) Արբամ... Արբամ...

Արամ.— Եւ այսպիսով... եթէ դա այդպէս է... ուրեմն ասան ինձ ուղղակի, առանց տատանւելու... Ես կը հասկանամ քեզ... և դու ազատ կը լինես վարւելու այնպէս, ինչպէս կուզենաս... Ոչ մի տրտունջ դու չես լսի ինձանից, Լիւսի... Դէ պատասխանիր ուրեմն:

Լիւսի.— (լուռ է, աւելի խորն է թաղում իր գլուխը ձեռքերի մէջ):

Արամ.— (լռութիւնից յետոյ) Սակայն հոգուս մէջ, Լիւսի, մի փոքր յոյս դեռ կայ— յոյս, որ դեռ ամեն ինչ վերջացած չէ... որ դեռ կարելի է վերականգնել...

Լիւսի.— (ոյժ է գործ գնում, որպէս զի խօսի) Մենք պէտք է բաժանենք, Արբամ...

Արամ.— (նայում է կնոջը... կարծես մի ինչ որ սուր է անցնում Արբամի աչքերով: Շրթունքները շարժւում են, բայց ոչինչ չէ ասում. նրա ամբողջ մարմինը հետզհետէ ընկճւում է, և թուլացած՝ Արբամը նստում է. լուռ նա նայում է իր առջև մի ոչինչ չարտայայտող հայեացքով) Այսպէս... այսպէս... պէտք էր սպասել... այսպէս... Դու ինձ չես սիրում: (լռութիւնից յետոյ) Ուրիշըն ես սիրում:

Լիւսի.— (տատանւելով) Ո՛չ...

Արամ.— (հայեացք է յառում Լիւսիին, ապա վեր է կենում մօտենում նրան, վերջում նրա ձեռքերը իր ձեռքերի մէջ) Լիւսի, ինչո՞ւ անկեղծ չես... Այս վայրկեանին մենք շիտակ պիտի լինենք իրարու դէմ... Այն, ինչ որ դու կասես ինձ սրանից յետոյ, յամենայն դէպս աւելի սարսափելի չի լինի, քան այն... այն որ... դու ինձ չես սիրում այլևս...

Լիւսի.— Ես այդ չասացի, Արբամ...

Արամ.— (ապշած նայում է) Դու այդ չասացիր... Ինչ է նշանակում այդ... Մի տանջիր... ասան...

Լիւսի.— (բարձրացնում է գլուխը ու նայում Արբամին) Ոչինչ հարկաւոր չէ իմանալ քեզ... Մենք պէտք է բաժանւենք— ահա բոլորը... Մնացածը թող ինձ:

Արամ.— Կամ բացատրիր, Լիւսի... կամ թոյլ տուր կարծելու: որ դու սիրում ես այն մարդուն:

Լիւսի.— Ո՛չ, հաւատան ինձ, Արբամ... դեռ ևս երէկ ես ինքս կարծում էի, որ սիրում եմ նրան: Դեռ երէկ նա կար, գոյութիւն ունէր այդ սէրը... Բայց այժմ... այժմ չկայ... ոչինչ չէ մնացել նրանից...

Արամ.— Ես ոչինչ չեմ հասկանում, Լիւսի:

Լիւսի.— Լսիր, Արբամ: Երբեք եմ, որ ճշմարտութիւն է իմ ասածը: Բայց այնուամենայնիւ ես պէտք է գնամ, պէտք է թողնեմ քեզ:

Արամ.— Եւ այնուամենայնիւ պէտք է թողնես...

Լիւսի.— Այո, այո: Պէտք է, պէտք է...

Արամ.— Լիւսի:

Լիւսի.— Հարկաւոր է բացատրել... բայց դա այնքան դժուար է... Ձէ, մի հարցնի, ոչինչ մի հարցնի... Յետոյ, աւելի ուշ, ինքդ կը հասկանաս... Ես ոյժ չունեմ ասելու այդ բանը... Ա՛հ, ինչ որ է՝ ես շնորհակալ եմ քեզնից, որ դու ընտրելու ազատութիւն ես տալիս ինձ... Եւ ես գնում եմ...

Արամ.— Ո՛չ, Լիւսի... Ես այնուամենայնիւ հարցնում եմ... Ձէ որ ես պէտք է իմանամ...

Լիւսի.— Արբամ... Արբամ... Ա՛հ, այդ ինչ տանջանքներ են:

Արամ.— (մօտենալով նրան) Լիւսի, ինչո՞ւ ես քանդ, ասա ինձ: Եթէ իրօք այնպէս է, ինչպէս դու ես ասում, ապա ինչն է ուրեմն արդիւր հանդիսանում... Ասան, ասա ինձ ամենը, Լիւսի:



Լիւսի.—Ասէ՛լ, ամէնը: Դա այնքան սարսափելի է... բայց այո, աւելի լաւ է ասել, Այն ժամանակ դու կը համոզուես, որ մենք պետք է բաժանուենք, որ ես պետք է գնամ:

Աբրամ.—Պէտք է... Դու այնպէս ես ասում այդ խօսքը...

Լիւսի.—Այո, պէտք է:

Աբրամ.—Այդ ինչ է նշանակում... Պէտք է... Դա կարող է լինել այն դէպքում միայն, եթէ... Լիւսի, գլխումս մի սարսափելի միտք ծագեց: Լիւսի... միթէ... Այդ սարսափելի է, սոսկալի... Բայց ո՛չ, ո՛չ...

Լիւսի.—Ո՛ր հրքան է դա սարսափելի... և այնուամենայնիւ այդպէս է...

Աբրամ.—Չէ, այդ չի կարող լինել... Իմ Լիւսին, իմ Լիւսին...

Լիւսի.—Այո, այո: Քո Լիւսին: Ահա, երէկ երեկոյեան... քո Լիւսին նրա մօտ էր... և այնպէս... Ա՛հ, սոսկալի է...

Աբրամ (կարծես զարանցման մէջ) Դա ինչ բան է... ինչո՞ւ է...

#### Պատուգա:

Լիւսի.—Այժմ դու տեսնում ես, որ մենք պէտք է բաժանուենք: Աբրամ, Աբրամ, մի նայիր այդպէս: Անտանելի է... ինչ տանջանքներ են, Տէր իմ, ինչ տանջանքներ են...

Աբրամ.—Այո... այո... (քայլում է գուլիւր ձեռներէ մեջ բռնած):

Լիւսի.—Այժմ դու գիտես բոլորը... միայն թէ մի արհամարիւր ինձ... և թող որ գնամ... դու արդէն ասացիր, բայց էլի մի անգամ կրկնիր, որ արձակում ես ինձ... և ես կը գնամ...

Աբրամ.—(մտածող) Այո, այո... Սպասիր... սպասիր...

Լիւսի.—Իսկ դու, դու գնա... շարունակիր քո ճամբար... բայց ես կուզնայի, որ դու երբեմն մտաբերէիր քո թոյլ, անզօր զինակցին, որ չը դիմացաւ և մնաց ճանապարհի կիսին... (Մեղմիւ հեկեկում է):

#### Պատուգա

Աբրամ.—(կանգնած է սեղանի մօտ) Այո... այո... Բայց միթէ դա այդչափ սարսափելի է: Մարդիկ ասում են որ այո, սարսափելի է... Բայց միթէ իրօք դա այդպէս է... Ես լիովին չեմ բմբռնում այդ... Այո: Ես սկսում եմ հասկանալ, Լիւսի, թէ բանը ինչու՞ն է, ես սկսում եմ հասկանալ քեզ: Դու ասում ես, որ այդ ամենը մի բռնկում էր... որ դա անցել է... որ այն սէրը դոյրու-

թիւն չուներ այլևս... Ուրեմն... Ես չեմ հասկանում... Բայց եթէ մենք սիրում ենք իրար... Ուրեմն ամբողջ բանը նրանումն է, որ քո և իմ միջև կանգնել է այն... այն, ինչ որ կատարել է երէկ... Դրանումն է ամբողջ բանը, Լիւսի:

Լիւսի.—(չէ պատասխանում, նայում է Աբրամին):

Աբրամ.—Ամբողջ բանը դրանումն է... և դա է, որ ստիպում է քեզ թողնել և գնալ: Ես ասասացի որ մարդիկ համարում են այդ բանը ոճրագործութիւն... Բայց, Լիւսի, եթէ դրանումն է բոլորը, այդ դէպքում անմտութիւն է այն, ինչ որ դու ուզում ես անել... Մնացիւր:

Լիւսի.—Ինչ ես ասում, Աբրամ... հասկանում ես թէ ինչ ես ասում...

Աբրամ.—(վերցնում է նրա ձեռները) Հարկաւ դա ծանր է, իհարկէ այդ բանը սասանեց իմ հոգին: Լիւսի, բայց միթէ...

Լիւսի.—Դու կարող ես և միջ ներել ինձ... Աբրամ... Ո՛չ, Աբրամ...

Աբրամ.—(ընդհատելով նրան) Լիւսի, բայց չէ՞ որ եթէ մենք սիրում ենք իրար... Ա՛հ, եղիր դու ոճրագործներին ոճրագործը, ինձ համար դա միեւնոյն է... Լիւսի, իմ Լիւսի:

Լիւսի.—Ո՛չ, ո՛չ: Դա անմտութիւն է: Ես պէտք է գնամ:

Աբրամ.—Լիւսի:

Լիւսի.—Ո՛չ, Աբրամ: Երջանկութիւնը կորած է մեզ համար... իմ ամեն համբոյրը կը յիշեցնի քեզ, որ նոյն կերպով ես համբուրել եմ մի ուրիշի... Ո՛չ, դա անդառնալի է... ամեն անգամ, երբ...

Աբրամ.—Լիւսի, Լիւսի, ես սիրում եմ քեզ, դու գիտես թէ ինչպէս եմ ես սիրում: Եւ իմ խանդը այնքան փոքր է, այնքան չնչին համեմատած իմ սիրոյ հետ:

Լիւսի.—Ա՛խ, ինչ ես ասում, Աբրամ: Դա լոկ խօսքեր են: Ես իրաւունք չունիմ ստեղծելու քեզ համար մի դժոխք... Ես չեմ ուզում այդ զոհաբերութիւնը...

Աբրամ.—Մի ասիր այդպէս, Լիւսի: Դու ինքդ էլ չես հաւատում ասածներդ... Ինչո՞ւ ես դու դիմադրում ինքդ քեզ, ինչո՞ւ ես կամենում տապալել քո սեփական երջանկութիւնը: Դու ասում ես, որ դա անկարելի է: Լիւսի, բայց ինչո՞ւ չը փորձել: Չէ՞ որ, վերջ ի վերջոյ, մենք ինքներս ենք կռւում մեր երջանկութիւնը: Տէր իմ Աստած, Լիւսի, նայիր շուրջդ: Տես, լուսանում է: Միքայելը ասաց որ այսօր դարնանային վերջին օրն էր:



Բնութեան մէջ ծնունդ է առնում ամառը: Գուցէ այդ ամառը մեր հոգիները ամառն է, մեր սիրոյ ամառը, մեր երջանկութեան ամառը: Ինչո՞ւ հրաժարել երջանկութիւնից...

Լիւսի.—Ա՛հ, Աբրամ, ես չը գիտեմ ինչ ասել... Ինձ թւում է, որ դա ինչ որ մի կոմպրոմիս է... Թող ինձ, Աբրամ... չեմ կարող, չեմ կարող...

Աբրամ.—Լիւսի (գրկում է Լիւսին): Ես ասում եմ՝ գուցէ այն, ինչ պատահեց—դա մի մեծ հրդեհ է, որից յետոյ մեր սէրը կը դառնայ աւելի վսեմ, աւելի ամուր: Դու ասացիր—կոմպրոմիս: Իմ անմիտ աղջիկս: Անպէտք է այն սէրը, որը չը գիտէ ներել և դոճաբերել: Լուսի, Լիւսի: Ո՛ր, որքան թանգ ես դու ինձ համար: Եթէ ամբողջ աշխարհը ապստամբուի, նա չի կարողանայ խլել քեզ ինձանից: Նայիր աչքերիս, Լիւսի: Դիմաւորենք մեր կեանքի ամառը գրկարաց: Դու այդ ուզում ես, այնպէս չէ, Լիւսի, դու պատրաստես անելու այդ... Նու, Լիւսի, ասա՛ այո, նայիր ինձ, Լիւսի...

Լիւսի.—Տէ՛ր Աստուած, կարծես երազ լինի...

Աբրամ.—Ո՛չ, վերջացան երազները, ճշող երազները, բայց փոխարէնը սովորեցրին ինձ սիրել... Լիւսի, երէկ դու չասացիր այն «այո»ն, բայց այսօր, այսօր դու կասես, չէ, Լիւսի: Նո՛ւ, ես սպասում եմ:

Լիւսի.—(Նայում է Աբրամի աչքերին, երկար, անթարթ, Պաուլա՝ վերջապէս կամաց արտասանում է) Այո՛:

Աբրամ.—(գրկում է Լիւսին ու համբուրում) Ի՛մ Լիւսի, դու դարձեալ իմն ես, դարձեալ իմը... Դեռ երբէք դու այնչափ թանգ չես եղել ինձ համար, որքան այժմ... Ես յանկարծ յիշեցի, որ ինձ աքսորում են, որ պիտի շտապեմ հեռանալ քաղաքից, որ ես՝ այժմ օրւայ հերոս եմ... գիտես, այնքան աննշան և ծիծաղելի է թւում ինձ այժմ այդ բոլորը... Ո՛ր, որքան հզօր եմ ես այժմ, Լիւսի, որքան հզօր... հոգիս լի է այնպիսի երջանկութեամբ...

Լիւսի.—Աբրամ, իմ Աբրամ...

Աբրամ.—Լիւսի, ես պատրաստ եմ թռչկոտել, ծիծաղել, երեխայի նման զւարճանալ, պատրաստ եմ տնէ տուն վազել և ասել ամենքին, որքան բախտաւոր եմ: Ո՞րտեղ է Միքայէլը: Շուտով գնանք այն սենեակ, թող տեսնի նա...

Լիւսի.—Սպասիր, Աբրամ:

Աբրամ.—Ո՛չ, չեմ կարող: Գնանք այն սենեակ, թող տեսնի Միքայէլը... Եւ եթէ կարող է այստեղ էլ դատողութիւն ներ անի: (Գրկաբառնաժանցում են հիւրասենեակ):

Աբրամ.—Միքայէլ, դու դեռ այստե՞ղ ես: Ի՞նչ գործի ես: Միքայէլ.—Նայում եմ արեւիքին: Արեւ ծագում է:

Լիւսի.—Արեւը, արեւը (նետում է դէպի պատուհան):

Աբրամ.—(Բռնելով Միքայէլի ձեռները) Իմ սիրելի, իմ անգին ընկեր, եթէ իմանայիր, որքան բախտաւոր եմ...

Միքայէլ.—Ոչինչ չեմ հասկանում:

Լիւսի.—Նայեցէք, արեւակը ծագում է:

Աբրամ.—(մօտենում Լիւսիին և գրկում նրան: Յանկարծ նրանք լուսաւորում են ծագող արեւի ճառագայթներով):

Լիւսի.—(Նայելով Աբրամին) Աբրամ...

Աբրամ.—Ի՞նչ է, ի՞նչ է, իմ հեքիաթային Լիւսի:

Լիւսի.—(Երկար նայում է նրա աչքերին, ապա տեսնում) Բարի լոյս:

Աբրամ.—Բարի լոյս... Բարի առաւօտ իմ անդինս (Համբուրում է կնոջը):

Լիւսի.—(յանկարծ ոյժերը դաւաճանում են նրան, նա թեքւում է Աբրամի ուսին) Այժմ ես կը գնամ քնելու: Ես այնպէս յոգնել եմ, իսկ յետոյ... աւելի ուշ... կը զարթնեմ և կը ողջունեմ իմ զարթնումը... (բոլորովին ուժասպառ է ու յոգնած):

Միքայէլ.—Ի՛նչ, ասացէք, վերջապէս, ի՞նչ է այս բոլորը նշանակում:

Աբրամ.—Ինչ է նշանակում: Սա հարցնում է—ինչ է նշանակում:

Միքայէլ.—Ես բառացի կերպով ոչինչ չեմ հասկանում:

Լիւսի.—Եւ հարկաւոր էլ չէ հասկանալ, պարոն գիտնալիս: Մեկնեցէք ինձ ձեր ձեռքը, Միքայէլ, և հաւատացէք որ ես բախտաւոր եմ և ուժեղ...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

Վ Ե Ր Զ





## ԿԱՐԵԻՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | Տող | Տողի Ած է | ՊէՏՔ է ԼԻՆԻ    |
|----|-----|-----------|----------------|
| 22 | 8   | վերևից    | ճշմարիտ է,     |
| 24 | 1   | ներքևից   | թոթւում է      |
| 26 | 23  | վերևից    | թոթւում է      |
| 27 | 4   | »         | սեղանը         |
| 31 | 7   | »         | վախենում       |
| 35 | 9   | »         | խօսքորին       |
| 38 | 9   | ներքևից   | ցնորքներին     |
| 42 | 13  | վերևից    | Ոչինչ,         |
| »  | 17  | »         | երևակայում     |
| »  | 22  | »         | նոյնպէս, Լիւսի |
| 46 | 2   | ներքևից   | ամենայամար     |
| 53 | 3   | ներքևից   | յետ են         |
| 64 | 1   | »         | կամքը, որի     |



ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.



19029

2013



